

ՄԵՐ ԱՆԿԻԲԵՆ

ՇԱՅ ԺՈՂՈՎՈՐԴԻ ԵՐՈՍԱԿԱՆ ՆՈՐԱԳՈՅՆ ԿՈՌՈՂՈՒՄՆԵՐԵՆ՝ ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԸԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

ՏՕԳԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Իր հարազատ մօր, հայ ժողովուրդի գիրկէն դաւադրաբար գաւթուած ու անխոհեմ կերպով անոր դարաւոր բշտամբիւն, ազերի-ին շնորհուած հայ ազգի պարծանք-ներէն Լեոնային Ղարաբաղը, իր վրայէն թօթափած օտար ամէն լուծ ու պարտաւորութիւն, արդար ու արժանաւայել կերպով կը նշէ իր Հանրապետութեան կազմաւորման հոչակագրի 15րդամակը:

Աւելի քան ինը տասնամակներ, Արցախ մնաց ստաբարոյ «եղբայրութիւն» շեփորող ազերի իշխանութիւններու տիրապետութեան տակ: Իբրեւ թէ «կարմիր», սակայն Լեւոնային Ղարաբաղը, խօսքար մոխրանդի եւ հայատեաց ժողովուրդ՝ հազիւ ներկայացաւ առիթը, խորհրդային իշխանութեան փլուզումով դուրս տուաւ իր բնական գոյնը, որ կը յատկանշուի իր ջարդարար մոլուցիկով: Պատճառը՝ Հայր Արամի Երեւանի շրջանէն: Դա իր արժանաւայել կերպով արժանապատիւ տիրապետութեան տակ: Ստեղծել իր միութեան բարբաւ անմահ ուրոյն ուղի: Ծաւալ տալ իր կրթական ցանցերուն: Զարգացնել իր գիտական, մշակութային կեանքը: Յատկանշաբար՝ սերտօրէն կամրջուի իր մայր հայրենիք՝ Հայաստան աշխարհի հետ եւ բոնցֆանալ՝ կարենալ միասնաբար դիմակայելու համար իրենց առջեւ քրգացած ազգային, ընկերային, բաղաձայն ու հոգեմտաւոր բնոյթի դարաւոր ու պղծմական հիմնախնդիրները:

Ազերի մոռցաւ ամէն, տասնամակներ պատմութիւն ունեցող, «եղբայրական», «միութեանական», «ընկերական» զգացում: Մոռցաւ բերքողական ջերմ տողերու ընդմէջէն իրարու նուիրած եւ փոխադարձաբար իրար գովերգող բանաստեղծական յորդարատ բառերը: Անոնց փոխարէն վերցուց կացին, մանգաղ ու ջահ: Զարկ տուաւ ուժգին: Կոխատեց մէկին: Հրդեհեց չորսդին: Արիւն քափեց Սոււկայթէն Պաֆու: Ամայացուց Մարտակերտէն Գանձակ: Թնդանօրներ գոռացին

Շաբ.ը էջ 8

ՎԱՐԴԱՆ ՕՍԿԱՆԵԱՆ. «ՀԱՄԱՆԱԽԱԳԱՅՆԵՐԸ ՅՍՏԱԿ ԽՆԴԻՐ ԵՆ ԴՐԵԼ ՎԵՐՍԿՍԵԼ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ»

Հայաստանի Արտաքին Գործոց նախարար Վարդան Օսկանեան Սեպտեմբեր 11-12 Փարիզի մէջ հանդիպած է ԵԱՀԿ Մինսկի խումբի համանախագահներ՝ Մեթիւ Պրանգալի (ԱՄՆ), Պեռնար Ֆապէի (Ֆրանսա) եւ Եուրի Մերգլեակով (Ռուսաստան) հետ: «Ազատութիւն» ռատիոկայանի հետ ունեցած հարցազրոյցի ընթացքին նախարարը որոշ մանրամասնութիւններ փոխանցած է իր հանդիպումներու մասին:

«Համանախագահները յստակ խնդիր են դրել բանակցութիւնները վերսկսել», - ըսած է Վարդան Օսկանեան: - «Իրենք դեռ հաւատում են, որ հնարաւոր է մինչեւ այս տարուայ վերջը կամ, ամենաուշը՝ մինչեւ մեր խորհրդարանական ընտրութիւնները ինչ-որ լրացուցիչ դրական տեղաշարժ արձանագրել: Դրա համար պէտք է անպայման բանակցութիւնները վերսկսել»:

Օսկանեանի խօսքերով, համա-

նախագահները կ'աշխատին, որպէսզի կարելի եղածին չափ շուտ կայանայ Հայաստանի եւ Ատրպէյջանի արտաքին գործոց նախարարներու միջեւ հանդիպումը. - «Միւս կողմից՝ լաւ գիտակցում են, որ բաւական խնդիրներ կան, խոչընդոտներ կան, որոնք պէտք է հանել, վերացնել, որպէսզի կարողանանք առաջ գնալ: Այս երկու օրերի ընթացքում հիմնական շեշտադրումը դրա վրայ էր»:

Օսկանեանի համաձայն, հիմնական խնդիրները երկուքն են՝ յստակեցնել, թէ որոնք են հիմնական հարցերը՝ սկզբունքներու շուրջ ներկայացուած փաստաթղթին մէջ, որպէսզի կարելի ըլլայ կեդրոնանալ անոնց վրայ, եւ երկրորդը բանակցութիւնները հունէն շեղուելու հարցն է, որ Ատրպէյջան անընդհատ մէջտեղ բերէ՝ այլ ատեաններ դիմելով:

Շաբ.ը էջ 4

ՇՐՈՒՄԻ ՆՈՐ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԲԱՑՈՒՄԸ ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ



Ձախէն աջ՝ Փասատիւնայի Ռատիոկայան Պեռնար Մէլիքեան, Վերապատուելի Ճօ Մաթոսեան, Բոնկրէսական Ատրմ Շիֆ, Հ.Բ.Ը.Մ.ի ատենապետ Վահէ Իմաստունեան, Վաչէ Արմաթա, Յովսէփեան, Փասատիւնայի Բաղաձայն Պիլ Պեկարտ եւ Հ.Բ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ Սիման Սիմանեան

Բեղմնաւոր Անցեալ, Լուսաշող Ապագայ հրաշալի լօզունգի տակ ամփոփուած էր Կիրակի 10 Սեպտեմբեր 2006, կ.Վ. Ժամը 4.00ին Արլատեանայի Հ.Բ.Ը. Միութեան կեդրոնին մէջ կատարուած համանուն

միութեան Բարձրագոյն Վարժարանին բացումը:

Կրթաւէր հոծ հասարակութիւն մը ներկայ էր վարժարանի բացման

Շաբ.ը էջ 8

ԱՐԴԱՐԱՂԱՏՈՒԹԻՒՆ ԸԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ԱՐՄԱՆ ԲԱԲԱԶԱՆԵԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԵՑԱԻ ԶՈՐՍՈՒԿԵՍ ՏԱՐԻ ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ

Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքներու առաջին ատեանի դատարանը 4 տարուայ ազատազրկման դատապարտեց «Ժամանակ Երեւան» թերթի գլխաւոր խմբագիր Արման Բաբաջանեանին, գինուորական ծառայութեան խուսափելու պատճառաւ:

Արման Բաբաջանեան ընդունած է, որ խուսափած է գինուորական ծառայութենէն եւ զոջուած յայտնած է: Ան սակայն ըսած է. «Պէտք է սասեմ, որ հայրենի բանակում ծառայութեան երկու տարին շատ աւելի նախընտրելի պարտականութիւն եմ դիտել եւ դիտում, քան օտարութեան մէջ անցկացրած ամէն մի նոր օրը: Անպէս որ, 9 տարի առաջ Հայաստանը լքելու աւելի լուրջ, աւելի հիմնաւոր պատճառներ ունէի, քան գինուորական ծառայութիւնից խոյս տալը»:

Պետական մեղադրող Ժաննա Կոթիկեան Արման Բաբաջանեանի համար պահանջած էր փաստաթուղթեր կեղծելու համար 1, իսկ զօրակոչէն խուսափելու համար՝ 4 տարի: Դատաւորը, սակայն, որոշեց, որ Արման Բաբաջանեանի փաստաթուղթեր կեղծելու մեղադրանքը հիմնաւոր չէ եւ այդ մասով ան անմեղ է:

Արման Բաբաջանեան կրնայ 15 օրուայ ընթացքին դատաւճիռը բողոքարկել վերաքննիչ դատարանի առջեւ:

Այս առթիւ Հայաստանեան մամուլը կը յիշեցնէ, որ Պօղոս Պօղոսեանին օր ցերեկով սպաննած «Կուկուն» ստացած է ընդամէնը մէկ տարի բանտարկութիւն, այդ ալ պայմանական: «Ֆառ» մականունով ոճրագործը երեք հոգիի սպանութեան համար դատապարտուած է եւ սակայն 2-2,5 տարի յետոյ յայտնուած է ազատութեան մէջ, Արմէն Նովիկովը մարդ սպաննած է, բայց ընդամէնը մի քանի ամիս բանտարկուած: «Այս ցանկը կարելի է շարունակել: Այսպիսին են ժամանակները: Մարդասպաններն այսօր յարգի են, նրանք կարող են իշխանութիւններին օգուտ տալ, մինչդեռ լրագրողները միայն վնաս են տալիս», - ինչպէս կը գրէ Չորրորդ Իշխանութիւն թերթը:

ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ **ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՅ ՓԱՌԱՏՕՆ

ԿԻՐԱԿԻ ՍԵՊՏԵՄԲԵՐ 24, 2006 ԿԼԷՆՏԻՅԼԻ "VERDUGO PARK"

ԱՌԱՒՕՏԵԱՆ ԺԱՄԸ 10:00-ԷՆ ՄԻՆԶԵԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 7:00-Ը

ՎԱՅԱՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ԱՌԱՋԻՆ ՎԱՐԿԱԾԸ

Երեւանի կենտրոնում տեղի է ունեցել հերթական լիտի սպանութիւնը, որին զոհ է գնացել ՀՀ հարկային պետական ծառայութեան օպերատիւ-հետախուզական վարչութեան պետ Շահէն Յովասափեանը: Իհարկէ, այս սպանութիւնը դեռ երկար կը քննարկուի, առաջ կը քաշուեն բազմաթիւ վարկածներ: Այդ վարկածների մի հիմնական մասը, սակայն, շրջանառութեան մէջ կը դրուի ոչ թէ իրականութիւնը պարզելու, այլ դրանից շեղելու համար: Եւ փորձը ցոյց է տալիս, որ նման դէպքերում առաջին արձագանքը եւ առաջին վարկածը ամենաճիշդն է լինում: Եւ եթէ շարժուենք այս տրամաբանութեամբ, Յովասափեանի սպանութիւնը պէտք է որակել որպէս Հայաստանում իշխող դարաբաղեան կլանի տրոհման հետեւանք: Ինքը՝ Յովասափեանը, դարաբաղեան կլանի առանցքային ներկայացուցիչներից էր եւ Հայաստանում բարձր պաշտօններ էր ստացել կլանի շնորհիւ: Եւ նա համապատասխանում էր կլանային պաշտօնեացի բոլոր չափանիշներին. լինելով Հայաստանի հարկային պետական տեսչութեան խոշոր հարկատուների վարչութեան պետ, ապա եւ՝ ՀՊԾ ուժային սեկտորի ղեկավար՝ Յովասափեանը ինքն էլ խոշոր գործարար էր: Նա, ըստ էութեան, ընդլայնակց միլիոնատէր էր, ինչը ամենեւին էլ չի ենթադրում, որ այդ գումարները վաստակել էր բիզնեսի հաշուին: Ինչ վերաբերում է կլանի տրոհմանը, այսպէս անուանում ենք Ռոբերտ Քոչարեանի եւ Սերժ Սարգսեանի քաղաքական ճանապարհների բաժանումը, երբ առաջինը որոշեց խաղաղորդք անել նոր ձեւաւորուող ուժի՝ «Բարգաւաճ Հայաստանի» վրայ, իսկ Սերժ Սարգսեանը ընտ-

քանի որ կլանային գործարարները օգտուում են նման արտօնութիւններից: Եւ ահա, վճռական պահին Հարկային տեսչութիւնը կարող է լրիւ օրինական հիմքերով սնանկացնել կողմերից իւրաքանչիւրին, որովհետեւ կլանի առանցքային դէմքերը հարկեր չեն վճարում ուղղակի բացառապէս կերպով: Ու այս իմաստով խիստ կարեւոր է, թէ ո՞ւմ վերահսկողութեան տակ կը լինի Հարկայինը, եւ ո՞ւմ կը յարեն նրա առանձին պաշտօնեաները: Եւ ի դէպ, չպէտք է բացառել, որ Յովասափեանի սպանութեան հիմք է դարձել մի իրավիճակ, երբ նա վնաս է տուել կամ հրաժարուել է վնաս տալ ներիշխանական այս խաղերում ակտիվ դերակատարում ունեցող որեւէ գործարարի: Ասել է թէ՛ կա՛մ նրա սնանկացման «բիզնես-ծրագիր» է ունեցել, կա՛մ հրաժարուել է իրականացնել իրեն յանձնարարուած «բիզնես-ծրագիրը»: Այս երկու տարբերակներն էլ խիստ հաւանական են, որովհետեւ գոտ պաշտօնի բերումով Յովասափեանին կարող էին հրահանգ տալ թէ՛ նախագահականից, թէ՛ կառավարութիւնից, թէ՛ անգամ ՀՊԾ ներսից: Այնպէս որ, այս վարկածը առաջին հայեացքից է պարզ երեւում, իրականում այն բաւական խճճուած է: Բայց գրեթէ ակնյայտ է մի բան, որ իշխանութեան վերնախաւում գտնուող մէկ մարդ կամ սահմանափակ թիւով մարդիկ իմացել են, թէ ինչ է սպանում ՀՊԾ օպերատիւ հետախուզական վարչութեան պետին: Ու երբ վաղ առաւօտեան X պաշտօնեացի օգնականը նրան գեկուցել է, որ սպանուել է ՀՀ հարկային պետական ծառայութեան օպերատիւ հետախուզութեան վարչութեան պետ Շահէն Յովասափեանը, ահա այդ X պաշտօնեան ասել է.

ԲԵՐԱՆԸ ՓԱԿ՝ ԽԵԼՈՔ ԷՐ ԹԻՈՒՄ

Եթէ առաջիկայ մի քանի օրերի ընթացքում Սերժ Սարգսեանը եւս մի քանի անգամ հրապարակային ելույթ ունենայ, հասարակութեան համար վերջնականապէս պարզ կը դառնայ, որ նրա բանասիրականի դիպլոմն առանձնապէս չի տարբերում բնակութեան վայրի մասին Քոչարեանին տրուած ժէկ-ի տեղեկանքից: Իսկապէս, տարիներ շարունակ Հայաստանում մի հետաքրքիր երեւոյթ էր նկատուած: Քոչարեանն անընդհատ խօսում էր կլիզմայի, վատ պարողին խանգարող հանգամանքների, մէջքից ներքեւ փափուկ տեղի, վիզկապի ու մասանդրայի մասին, եւ քանի որ Սերժն առանձնապէս շատ չէր խօսում, սպաւորութիւն էր ստեղծուած, թէ Քոչարեանի համեմատ նա ահագին խելօք է: Բայց ահա վերջին մի քանի օրերին Սերժ Սարգսեանը սկսեց խօսել: Չդիմացաւ գայթակղութեանը: Եւ պարզուեց, որ ինտելեկտի առումով առանձնապէս չի տարբերում Քոչարեանից: Նոյնիսկ բառապաշարն է մօտաւորապէս նոյնը. է՛լ «ոճակ», է՛լ «խղճուկները դէմ չեմ պայքարում»:

Չաւեշտն այն է, որ երեւի Սերժ Սարգսեանին թուացել է, թէ Քոչարեանն իր կիսազրագէտ գեղացու իմիջով լաւ էլ կայացել է որպէս քաղաքական գործիչ, եւ հիմա էլ ինքն է որոշել «ուժի՞ց եմ պակաս» սկզբունքով շարունակել այդ իմիջը: Այո, մէկից դեռ չպրծած՝ միւսն է մէջդան ընկնում: Մինչդեռ նա երկու ճանապարհ ունէր: Առաջին՝ ցոյց տալ, որ ինքն արժանի է Հայաստանի նախագահի պաշտօնին, եւ երկրորդ՝ ցոյց տալ, որ «չորով» կարող է տիրանալ այդ պաշտօնին: Նա ընտրեց երկրորդ ճանապարհը եւ սկսեց տեսախցիկների առջեւ ջղաձգել դիմային մկանները: Ընդ որում, այս բացայայտման համար հասարակութիւնը պարտական է ՀՀ-ին: ՀՀ-ն չլինէր՝ Սերժը կը շարունակէր նստել ծառի ճիւղին, վայելել իր պանիրը, եւ ոչ մէկը չէր իմանայ, թէ ինչպիսին է նրա ձայնը:

Բայց հետաքրքիրն այն է, որ Սերժ Սարգսեանն այսօրուայ դրութեամբ նախագահի միակ «անցողիկ» թեկնածուն չէ: Յամենայն դէպս ակնյայտ է, որ Քոչարեանը նաեւ վարդան Օսկանեանին եւ Դաւիթ Յարութիւնեանին է նախապատրաստում որպէս իրաւաչափ ջորդ: Ընդ որում, այս երկու թեկնածու թիւններն էլ առանձնապատու ուսումնասիրման կարիք ունեն: Սրանք կառավարութեան այն եզակի անդամներն են, որոնց դժուար է պատկերացնել, ասենք, որեւէ ստույգում քրէական հեղինակութիւնների կամ օլիգարխների հետ քննարկման ժամանակ՝ «սրանից յետոյ ընձի էք ատչոտ տալու» բառերով: Այս խղճերը մարմնի վրայ նոյնիսկ դաջուածքներ չունեն եւ կարգին հայհոյել չգիտեն, հետեւաբար, Քոչարեանի մտածելակերպով, չեն կարող լիարժէք նախագահ դառնալ: Այլ կերպ ասած, սրանցից որեւէ մէկին նախագահ դարձնելով՝ Քոչարեանը ձգտում է ինքն իր համար երջանիկ եւ անվտանգ ապագայ ապահովել: Ի՞նչ պիտի անեն այս խղճուկները նախագահի պաշտօնում: Ոչ մի բան: Էլ ինքը պիտի ղեկավարի երկիրը, ղեկավարի ռազմավարները, լուծի հարցերը, բայց՝ արդէն վարչապետի

պաշտօնում:
Պարզ ասած, Քոչարեանը միանգամից երկու պահեստային տարբերակ է մշակում: Մի դէպքում՝ վարդան Օսկանեանը ՀՅԴ-ի հետ, միւս դէպքում՝ Դաւիթ Յարութիւնեանը «Բարգաւաճ Հայաստանի» հետ: Իսկ սա նշանակում է, որ Քոչարեանը, մեղմ ասած, այնքան էլ չի վստահում Սերժ Սարգսեանին: Եւ դա հասկանալի է. Սերժի նախագահութեան դէպքում ինքը չի կարող վարչապետի պաշտօնով «փաստացի ղեկավար» աշխատել:
Բայց ամենահետաքրքիրն այն է, որ բոլոր այս տարբերակների դէպքում էլ Հայաստանում փաստօրէն տեղի է ունենում իշխանութիւնների վերարտադրում: Եթէ ինքն իրեն նախագահ հռչակի Սերժ Սարգսեանը, դա կը նշանակի, որ Հայաստանում շարունակելու է իշխել կիսաքրէական-կիսաօլիգարխիկ համակարգը: Եթէ նախագահ նշանակուի վարդան Օսկանեանը, դա կը նշանակի, որ Հայաստանն արտաքին քաղաքականութեան ասպարէզում շարունակելու է նոյն անմեղսուհի-յաղթօղական քեանդրբազու թիւնը, իսկ եթէ նախագահ նշանակուի Դաւիթ Յարութիւնեանը, դա ընդհանրապէս ոչինչ չի նշանակի: Պարզապէս մարդիկ կ'արձանագրեն, որ Ռոբերտ Քոչարեանը շարունակում է երկիրը թալանել կեղծանունով:
Բայց մինչեւ նախագահական ընտրութիւնները դեռ շատ ժամանակ կայ: Սերժ Սարգսեանին, վարդան Օսկանեանին եւ Դաւիթ Յարութիւնեանին խոնարհաբար ինդրում ենք հնարաւորինս աւելի լաճախ հանդէս գալ հեռուստատեսութեամբ:

ԱՆԴՐԱՆԻԿ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ
«ՉՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»

Շարկային պետական ծառայութիւնը եւ Յովասափեանի ղեկավարած վարչութիւնը առանցքային դերակատարում են ունենալու ներկայանային պայքարում Պատճառն այն է, որ կլանի քաղաքական վարագոյրների, այսինքն՝ գոյգ կուսակցութիւնների ետեւում ո՛չ գաղափարախօսութիւն կայ, ո՛չ գաղափարակիրներ, եւ ամենը հիմնուած է փողի վրայ

րեց Հանրապետական իրեն վերցնելու ճանապարհը: Կլանի այս երկու առաջնորդների տրոհումը բերեց ողջ կլանի տրոհման, ու նրանց մի մասը ներկայումս Ռոբերտ Քոչարեանի հետեւից է գնում, միւս մասը՝ Սերժ Սարգսեանի: Եւ Շահէն Յովասափեանի հետ տեղի ունեցածը հասկանալու համար, թե՛րեւս, հարկաւոր է նախ պարզել, թէ նա երկու թեկնածուից որ մէկին հետեւորդ էր: Ասում են, որ նա անմնացորդ նուիրուած է եղել Ռոբերտ Քոչարեանին: Բայց սա միայն Ռոբերտ Քոչարեանը կ'իմանայ, որովհետեւ նա անմնացորդութեան իր չափանիշներն ունի: Իսկ ընդհանրապէս, Հարկային պետական ծառայութիւնը եւ Յովասափեանի ղեկավարած վարչութիւնը առանցքային դերակատարում են ունենալու ներկայանային պայքարում: Պատճառն այն է, որ կլանի քաղաքական վարագոյրների, այսինքն՝ գոյգ կուսակցութիւնների ետեւում ո՛չ գաղափարախօսութիւն կայ, ո՛չ գաղափարակիրներ, եւ ամենը հիմնուած է փողի վրայ: Սրանք էլ այնպիսի փողեր են, որ պէտք է մտնէին պետբիւջէ ու չեն մտել,

«Այ-այ, այ-այ, այ»:
Յ.Գ. Նշենք, որ վատ նորութիւններ կան նաեւ ընդդիմութեան համար: Ռոբերտ Քոչարեանը իրաւապահ մարմիններին յանձնարարել է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ քայլերը՝ Շահէն Յովասափեանի սպանութիւնը արագ բացայայտելու համար: Նրանց, ովքեր չհասկացան, թէ այս նորութիւնը ինչով է վատը ընդդիմութեան համար, չի շեղենք, որ այսպիսի յանձնարարական Քոչարեանը մէկ էլ տուել է Տիգրան Նաղդալեանի սպանութեան կապակցութեամբ, ու այդ դէպքում, ինչպէս յալանի է, պարզուել է, որ սպանութեան հեղինակը ընդդիմադիր առանցքային գործիչներից մէկի՝ Արամ Զաւէնի Սարգսեանի եղբայրն է: Ինչ վերաբերում է վիկտոր Սողոմոնեանի յայտարարութեանը, լաւ կը լինէր, որ նա նշեր նաեւ, թէ իրաւապահները ի՞նչ պէտք է անեն այն սպանութիւնների հետ, որոնց բացայայտման հրահանգ Ռոբերտ Քոչարեանից չեն ստացել:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ
«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

www.massisweekly.com

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Ծրջանի
ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕԲԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆԾԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
ՍԱԴԱ ԹՈՒԹԾԵԱՆ
ՎԱԶԳԵՆ ԽՈՏԱՆԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ
Յեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

MASSIS Weekly
Organ of the Armenian Social
Democratic Hunchakian Party of
Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, Canada \$60 (Second
Class), \$75.00 (Air Mail)
Overseas \$85.00 (2nd Class Mail),
\$125.00 (Air Mail).
All payments must be made in
US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid
at Pasadena CA.

Please Send Address Change To
MASSIS WEEKLY
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104

ԼՈՒՐԵՐ

ԸՆԴԻՄԱԴԻՐ ՈՒԺԵՐԸ ՁԵԻԱԴՈՐՈՒՄ ԵՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ ԸՆԴԴԵՍ ԿՐԻՄԻՆԱԼԻ

ԵՐԵՒԱՆ, 11 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, ՆՈՅԵԱՆ ՏԱՊԱՆ: Ընդդեմ կրիմի-նալի քաղաքական շարժում սկսե-լու պատրաստակամություն չա-յտանքին «Մասնաճյուղական իրա-ւունք» միություն, «Ազգային Մի-ամերկայացում», Հայաստանի Դե-մոկրատական, «Հայրենիք եւ Պա-տիւ», «Ազգային ժողովրդավա-րական Միություն» կուսակցու-թիւնների եւ Հայաստանի Քաղա-քագէտների Միությունների կա-ցուցիչները ընդդիմադիր գոր-ծիչների հաւաքի ժամանակ, որ Սեպտեմբերի 11-ին նախաձեռնել էր «Նոր ժամանակներ» կուսակ-ցությունը:

«Նոր ժամանակներ»-ի նա-խագահ Արամ Կարապետեանի խօս-քերով, հաւաքի նպատակն էր նաեւ պարզել, թէ «Նոյեմբերի դէպքե-րից (սահմանադրական փոփոխու-թիւնների հանրաքուէն. «ՆՏ») յե-տոյ ընդդիմադիրներից ով է ողջ, ով է դարձել կրիմինալի գոհ»: Ըստ նրա, հաւաքը նախապատրաստա-կան բնույթ է կրում, եւ առաջիկա-յում, երբ յատկացուեն շարժման մասնակիցների անունները, աւելի կազմակերպուած միջոցառումներ կը լինեն:

ԱԺՄ նախագահ Վազգէն Մա-նուկեանի խօսքերով, անհրաժեշտ է ձեւակերպել փաստաթուղթ, որում

կը նշուի, թէ ինչ է քաղաքական կրիմինալը եւ ում դէմ են իրենք պայքարելու:

Ըստ «Հայրենիք եւ Պատիւ» կուսակցութեան նախագահ Գառ-նիկ Մարգարեանի, կրիմինալը մարդկանց խումբ է, որը, անտեսե-լով երկրի օրէնքները, գործում է սեփական օրէնքներով: Այսօր այդ խմբերը, ինչպէս ընդգծեց նա, «Թափանցել են հանրապետութեան նախագահի շրջապատ եւ Ազգային ժողով»:

Քաղաքագէտների միութեան նախագահ Հմայեակ Յովհաննիս-եանի կարծիքով, երկրում տիրող ներկայիս քաղաքական-հասարա-կական իրավիճակն արտառոց է, քանզի իշխող է դարձել կրիմինալ մտածելակերպը՝ «փող ունեմ՝ կը թելադրեմ իմ որոշումները»: Յով-հաննիսեանի համոզմամբ, Հայաս-տանում «բիզնես-էլիտան ձգտում է թելադրել իր դիկտատը»:

«Հանրապետութիւն» կու-սակցութեան քաղաքական խորհր-դի անդամ, Հայաստանի ներքին գործերի նախկին նախարար եւ Երեւանի նախկին քաղաքապետ Սու-րէն Աբրահամեանի խօսքերով, իրա-վիճակը Հայաստանում անկառա-վարելի է, որովհետեւ «իշխանու-թիւնն արդէն պատանդ է դարձել կրիմինալի ձեռքում»:

ԵԱՅԿ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ ՄՏԱՅՈԳՈՒԱԾ Է ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԾՆՇՄԱՆ ՅԱՄԱՐ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: ԵԱԿ Երեւանեան գրասենեակն այսօր հանդէս է եկել հետեւեալ յայտա-րարութեամբ. «ԵԱԿ Երեւանի գրասենեակը խորապէս մտահոգ-ուած է Հայաստանում լրագրողնե-րի դէմ կատարուող բռնարարքնե-րի եւ սպառնալիքների վերջին դէպքերով, որոնք խոչընդոտում են նրանց մասնագիտական պարտա-կանությունների կատարմանն ու սպառնում խօսքի ազատութեանը:

Տեղեկութիւնների համաձայն՝ ս.թ. Սեպտեմբերի 6-ին անյայտ անձինք յարձակուել եւ ծեծի են ենթարկել «Իրաւունք» թերթի խմբագիր Յովհաննէս Գալաշեա-նին՝ Երեւանում տնից դուրս գալու ժամանակ: Յուլիսի 12-ին «Չոր-րորդ իշխանութիւն» եւ «Առա-ւօտ» թերթերի արտահաստիքային լրագրող Գաբիէլ Շամշեանի վրայ յարձակուել եւ սպառնացել են: Գրասենեակը մեծապէս կարեւո-

րում է այս դէպքերի պատշաճ հետաքննութիւնն ու մեղաւորների պատժումը՝ օրէնքի ողջ խստու-թեամբ:

Գրասենեակը կոչ է անում իրաւապահ մարմիններին ձեռնար-կելու համապատասխան միջոցա-ռումներ լրատուութեան ոլորտի աշխատակիցների անվտանգութիւնն ապահովելու համար, ինչը կը խթանի երկրում խօսքի ազատութեան իրա-վիճակը:

Գրասենեակը ողջունում է ՀՀ մարդու իրաւունքների պաշտպա-նի, ՀՀ Նախագահի մամուլի քար-տուղարի եւ հասարակական կազ-մակերպութիւնների յայտարարու-թիւնները, որոնք դատապարտում են լրագրողների դէմ կատարուած բռնարարքները: ԵԱԿ Երեւանի գրասենեակը հանգամանօրէն կը հետեւի հետագայ զարգացումնե-րին՝ կապուած լրագրողների դէմ բռնարարքների այս դէպքերի հետ»:

ՀԱՅ ԱՐԻՆԵՐԸ ՉԵՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՆՈՐ ԴԵՍՊՈՒՆԻ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: Հայ արիական միաբանութեան «Ոգու Պահպաններ» ուսանողական եւ երիտասարդական կազմակերպու-թեան խորհուրդը դէմ է Հայաստա-նում ԱՄՆ նորանշանակ դեսպան Ռիչարդ Հոգլանդին: «Մենք, որ-պէս աւանդապաշտ հայ ազգը ներ-կայացնող երիտասարդութիւն, անընդունելի եւ զգրելի ենք հա-մարում համասեռամուլ դեսպանին բարոյական տեսանկիւնից, ով նա-եւ կանխակալ դիրքորոշում ունի հայոց ցեղասպանութեան փաստի նկատմամբ», - պարզաբանեց խորհր-դի նախագահ Էդգար Հելհեյլեանը:

Հայ Արիների երիտասարդ թեւը Սեպտեմբեր 12-ի ասուլիսին իր վրդովմունքն ու բողոքն էր յայտնում ՀՀ-ում ԱՄՆ նախկին դեսպան Ջոն Էվանսի հետկանչման կապակցութեամբ: Խորհրդի կար-ծիքով՝ պաշտօնական վաշիւնտոնը ցուցաբերեց բացասական վերա-բերմունք Հայաստանի Հանրապե-տութեան, ԱՄՆ հայ համայնքի եւ

աշխարհասփիւռ հայութեան նկատ-մամբ՝ ստորադասելով Հայոց Ցե-ղասպանութեան փաստը Թուրք-իայի հետ ունեցած իր տնտեսական ու ռազմա-քաղաքական շահերին: Ըստ Էդգար Հելհեյլեանի՝ «Ջոն Էվանսը ԱՄՆ այն բացառիկ պաշ-տօնեաներից էր, որ կարողացաւ ճշմարտութիւնն ասել 1886-1923թթ. Թուրքիայի կողմից իրա-կանացուած Հայոց Ցեղասպանու-թեան մասին»:

Ի դէպ, Հայ Արիական Միա-բանութեան «Ոգու Պահպաններ» Ուսանողական եւ Երիտասարդա-կան կազմակերպութեան խորհուր-դը այս առթիւ յայտարարութեամբ է հանդէս գալիս եւ այն յանձնելու է ինչպէս ՀՀ իշխանութիւններին, այնպէս էլ ԱՄՆ իշխանութիւննե-րին: Եթէ յայտարարութիւնը ար-դիւնք չտայ, նրանք պատրաստ-ուած են Ռիչարդ Հոգլանդի Հայաս-տան ժամանման օրը դասադուլներ եւ բողոքի ակցիաներ կազմակեր-պել:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ Է ՆՈՒԱԶԵԼ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Համաձայն ՄԱԿ-ի այս տարուայ գեկոյցի, Հայաստանի բնակչու-թիւնը այսօր կազմում է 3 միլիոն, իսկ 2050 թուականին բնակչու-թեան հաւանական թիւը կարող է նուազել մինչեւ 2,5 միլիոն:

Հայաստանում, ըստ գեկոյցի, իւրաքանչիւր 1000 ծննդին բաժին է ընկնում 29 նորածնի, իսկ 100 հազար ծննդին՝ 55 կնոջ մահ, տղամարդկանց կեանքի միջին տե-ւողութիւնը 68 տարի է, կանանցը՝ 75:

Նախկին խորհրդային տա-րածքից (բացառութեամբ Բալ-թեան երկրների) միայն Հայաստա-նում, Ռուսաստանում եւ Ուկրաին-նայում է բնակչութիւնը նուազե-լու:

առկայ բնակչութեան թիւը հաշ-ուարկում է միայն մարդահամա-րից մարդահամար:

«Յուլիսի 1-ի դրութեամբ Հայաստանում բնակչոււմ է 3 219 400 մարդ, որն իր մէջ ներառում է նաեւ մինչեւ մէկ տարով հանրա-պետութիւնից բացակայողներին: Այս տարի առաջին վեց ամիսների ընթացքում ծնուել է 17 513 երե-խայ, բնական աճը՝ հաշուի առնե-լով մահացութիւնը, կազմել է 3144: Նախորդ տարի նոյն ժամանակա-հատուածում գրանցուել է 3574 մարդու բնական յաւելում», - ասաց Կարինէ Կոչումջեանը:

Հայաստանի Երիտասարդ Կա-նանց Ասոցիացիայի տնօրէն Լիլիթ Ասատրեանն էլ մեզ հետ գրոյցում յիշեցրեց, որ երկու տարի առաջ կատարուած հետազոտութեան հա-մաձայն, վերարտադրողական տա-րիքի երիտասարդների 30 տոկոսը հիւանդ է ու այդ պատճառով ի վիճակի չէ երեխայ ունենալ, այն-պէս որ Հայաստանի բնակչութեան նուազման վրայ ազդում է նաեւ այս գործօնը:

ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ ԳԻՒՄՐՈՒՄ ՎԵՐԱՑՈՒԱԾ ՉԵՆ

Գիւմրիում երկրաշարժի հե-տեւանքով անօթեւան դարձած դե-ռեւան 4000 ընտանիք կա: Քիչ չեն նաեւ այն ընտանիքները, որոնք տարբեր պատճառներով վաճառել են բնակարաններն ու մնացել անօթեւան: Նմանատիպ խնդրի առաջ են կանգնած շատ փախս-տականներ: Դեռեւս յստակեցուած չէ, թե բնակարանային նոր ծրագ-րի իրականացման դէպքում առաջ-նահերթութիւնը որ ընտանիքնե-րին է տրուելու: Ենթադրում է, սակայն, որ հնարաւոր կը լինի հանրապետութիւնում լուծել մօտ 500 ընտանիքի բնակարանային խնդիր:

ՄԱԿ-ի հովանու ներքոյ գոր-ծող «Հաբիթադի» գրասենեակն ամբողջ աշխարհում իրականաց-նում է բնակարանաշինական ծրագ-

րեր: Գիւմրիում բնակարանաշի-նական նոր ծրագիր իրագործելու նպատակով այսօր «Հաբիթադի» եւրոպական եւ ասիական պետու-թիւնների ներկայացուցիչներն այ-ցելել էին Գիւմրի: Նպատակն էր տեղում ծանօթանալ քաղաքում առ-կայ բնակարանային խնդրին ու մարզային իշխանութիւնների հետ համատեղ գտնել հնարաւոր տար-բերակը՝ օժանդակելու անօթեւան ընտանիքներին:

Գիւմրիում առկայ բնակֆոն-դը, մասնաւորապէս, Լինսի, Կար-միր Խաչի, Նորուեգական կառա-վարութեան միջոցներով կառուց-ուած բնակելիներն ուսումնասիրե-լուց յետոյ աշխատանքային խում-բը որոշում կը կայացնի Գիւմ-րիում ծրագիրը կեանքի կոչելու վերաբերեալ:

ՈՉ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻՆ, ՈՉ ԱԼ ՎԱՐԴԱՆ ՕՍԿԱՆԵԱՆԻՆ

ԵՐԵՒԱՆ, «ԼՐԱԳԻՐ»: Հայ Ցեղափոխական Դաշնակցութիւնը հակուած է նախագահի ընտրու-թեանը մասնակցել սեփական թեկ-նածուով: Սեպտեմբերի 12-ին յայ-տարարել է կուսակցութեան Գե-րագոյն Մարմնի ներկայացուցիչ Արմէն Ռուստամեանը: Նա ասել է, որ այդպիսին է կուսակցութեան շարքերի տրամադրութիւնը: «Ունենալ սեփական թեկնածու նշանակում է բացառել որեւէ այլ թեկնածուի պաշտպանելը: Այ-սինքն տրամաբանութիւնը շատ յստակ է եւ Հրանդ Մարգարեանը հենց այդ տրամաբանութեամբ էլ ասել է: Սերժ Սարգսեան, Վարդ-գան Օսկանեան, որեւէ այլ թեկ-նածու այսօր Դաշնակցութիւնը չի պատրաստուած պաշտպանել, որովհետեւ տրամաբանութիւնն այն է, որ պէտք է ունենայ իր սեփական թեկնածուն», ասում է

Արմէն Ռուստամեանը: Սակայն միւս կողմից նա ոչինչ չի բացառում, ասելով, որ այդ հարցը լուծելու իրաւասու է միայն կուսակցութեան Գերագոյն ժողովը: Դա տեղի կ'ունենայ խորհրդարանի ընտրութիւնից յե-տոյ: Դրանից յետոյ եւ նախագա-հի ընտրութիւնից առաջ կայա-նալիք Գերագոյն ժողովն էլ կ'ո-րոշի, թէ ինչ մասնակցութիւն են ունենալու նախագահի ընտրու-թեանը: Չտապելու այդ մարտա-վարութիւնը Դաշնակցութիւնը պայմանաւորում է Ազգային ժո-ղովի ընտրութեամբ, եւ յատկա-պէս դրան յաջորդող իրավիճա-կով: ՀՅԴ անդամները կարծում են, խորհրդարանի ընտրութիւ-նից յետոյ շատ բան կարող է փոխուել, եւ նոյնիսկ իրենց մար-տավարութիւնը:

ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԱԿԱՆ ԶՕՐԱՄԻԱԴՈՐՄԱՆ ԴԵՄ
ՀԱՆՐԱՀԱԲԱՔ ՊՈՒՐԾ ՀԱՍՈՒՏՈՒՄ
ԻՆՉՈ՞Ւ ՌԱԿ-Ը ԵՒ ՍԴՀԿ-Ը ՉՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ

ԵՐԵՒԱՆ, «ԱԶԳ»։ Սեպտեմբերի 8-ին տեղի ունեցավ բողոքի հանրահավաքը Պուրծ Համուտի հրապարակում, որի մասին «Ազգ»-ը տեղեկացրել էր նախորդ համարում: Հանրահավաքը, որին ըստ չէզոք աղբյուրների մասնակցում էր շուրջ 2500 մարդ, կազմակերպվել էր Հ.Յ.Դաշնակցության կողմից: Դրան չէին մասնակցում Ռամկավար Ազատական եւ Հնչակեան կուսակցությունները: Նկատի ունենալով, որ արդեն շուրջ 30 տարի Լիբանանում հայկական աւանդական 3 կուսակցությունները ներլիբանանեան հարցերում եւ վարչիվերումների ժամանակ միշտ միասնաբար եւ համակարգում են հանդէս եկել՝ մտահոգություններ քանդակարեցինք Լիբանանի խորհրդարանի պատգամաւոր, ՄԴ Հնչակեան կուսակցության ղեկավարներից Եղիկ ձէրէճեանին եւ ունեցանք զրոյց մեզ մտահոգող հարցերի մասին:

Մինչեւ անցեալ երկուշաբթի օրը, տեղեկացրեց պրն ձէրէճեանը, լիբանանահայ 3 կուսակցությունների միջեւ ոչ մի տարակարծություն չկար ՄԱԿ-ի խաղաղապահների կազմում թուրքական ստորաբաժանման մասնակցություն եւ Հարաւային Լիբանանում վերջինիս տեղակայման հարցում: Այժմ էլ տարակարծություն չունենք այդ առանձնապատուկ հարցում, քանի որ դա բխում է մեր ժողովրդի պատմական խորքից եւ մեր ազգային զգացմունքներից:

Սակայն անցեալ երկուշաբթի օրը տեղի ունեցավ վարչապետ Ֆուադ Մինիորայի կառավարությունից նիստը, որին մասնակցում էր նաեւ հանրապետության նախագահ էմիլ Լահուդը: Վերջինս, որ սահմանադրականօրէն իրաւունք ունի կառավարութեան նիստերում օրակարգի իր հարցերը դնելու, առաջ էր քաշել հենց թուրքական ջոկատի մասնակցություն հարցը, մինչդեռ կառավարությունը նախապէս բնաւ չէր քննարկել (Լիբանանում ՄԱԿ-ի խաղաղապահ ուժերին) մաս կազմող այլ ստորաբաժանումների ազգային պատկանելութեան ինդիքը: Նախագահը նիստում ասել էր, որ այդ հարցը առաջ է քաշում Արամ Ա կաթողիկոսի պաշտօնական նամակի հիման վրայ:

Պրն ձէրէճեանը տեղեկացրեց, որ կառավարութեան նիստում թուրքական ստորաբաժանման մասնակցություն դէմ միակ քուէարկողը եղել է հայազգի միակ անդամը՝ տարածքային կառավարման բարեփոխումների նախարար, անկուսակցական Ժան Օղասափեանը, ձեռնպահ են քուէարկել 3-4 հոգի, իսկ մնացեալը կողմ են քուէարկել առանց մեկնաբանությունների: Մինչդեռ ՀՅԴ-ի երեքշաբթի օրը հրապարակած յայտարարութեան մէջ չի նշուում այս մանրամասնությունը եւ հարցը ներկայացուած է որպէս ողջ կառավարութեան, ներառեալ հայ նախարարի, վաւերացրած գործարք:

Հնչակեան պատգամաւորը հաստատեց նաեւ, որ Ֆուադ Մինիորայի կառավարութիւնը վերջին ճգնաժամի ընթացքում իր դրսեւորած արիւթեան, հեռատեսութեան եւ շրջահայեացութեան համար արժանացել է լիբանանցիներ-

ըի մեծամասնութեան, ինչպէս նաեւ օտար երկրների յարգանքին ու վստահութեանը: Սակայն, չաւելեց նա, գոյութիւն ունեն ներքին խմբաւորումներ, բանակի նախկին հրամանատար եւ երկրի նախագահութեան հաւանական թեկնածու գեներալ Միշէլ Աունի գլխաւորութեամբ, որոնք ձգտում են հրաժարեցնել Մինիորայի կառավարութեանը եւ կամ, առնուազն, նոր անդամներով համալրել այն: Պրն ձէրէճեանը չսասց, որ վերջին պարագայում շահագրգռութիւններ ունի նաեւ ՀՅԴ-ն, քանի որ չունի նախարար ներկայ կազմում, սակայն մատնանշեց, որ Մինիորայի կառավարութեանը դէմ է նաեւ պաշտօնական Դամասկոսը, «հաս՛թէ ինչու»:

Ինչպէս յայտնի է, նախկին վարչապետ Ռաֆիկ Հարիրիի սպանութեան հանգամանքների հետաքննութեան գործով Լիբանանի կառավարութեանը ներկայացուեց ՄԱԿ-ի համապատասխան ժամանակաւոր յանձնախմբի եզրակացությունը միջազգային դատարան ստեղծելու վերաբերեալ: Մինիորայի կառավարութիւնը այդ եզրակացությունը քննարկելուց յետոյ որպէս օրինագիծ հետագայում պէտք է ներկայացնի Լիբանանի խորհրդարանի վաւերացմանը, ինչին յաջորդելու է Հարիրիի սպանութեան մէջ մեղադրողներին միջազգային դատարան ներկայացնելու պահանջը: Դրան, բնականաբար, դէմ են լիբանանեան որոշ շրջանակներ, բնականաբար հարեւան Սիրիայի հովանաւորութեամբ, եւ այդ է պատճառը, որ ոմանց համար այդքան ցանկալի է Մինիորայի կառավարութեան հրաժարականը կամ անգործունէությունը...

Իրերի այս կացութեան մէջ է, որ երեւան եկաւ թուրքական ջոկատի ներկայութեան դէմ լիբանանահայութեան բնական եւ արդար ընդդիմութեան հարցը, որը դժբախտաբար վերածուեց հակակառավարական ընդդիմութեան, որին չեն ուզում մաս կազմել ՌԱԿ-ը եւ ՄԴՀԿ-ը: Այլ խօսքով, լիբանանահայութեան արդար պահանջը շահարկում է ներլիբանանեան կեդրոս խաղի համար, լիբանանահայութեան կամքից բոլորովին անկախ:

Պատասխանելով մեր հարցին, թէ ներհայկական իմաստով կարո՞ղ են հետագայ անախորժութիւններ լինել, հնչակեան երեսփոխանն ասաց, որ մամուլում կարող են փոխադարձ հակաճառութիւններ լինել, ինչը բնական է ժողովրդավարութեան տեսակէտից, սակայն վստահութիւն չայտնեց, որ տարակարծութիւնը կը սահմանափակուի դրանով: Լիբանանահայ քաղաքական կազմակերպությունները անցնող տասնամեակներին համագործակցութեան այնքան մեծ փորձ են կուտակել, որ յաղթահարելի են նման բոլոր տարակարծութիւնները:

Ինչ վերաբերում է հանրահաւաքին, Եղիկ ձէրէճեանը նշեց, որ ՀՅԴ ներկայացուցիչը, որի անունը դժբախտաբար չի իշեց, իրօք խստօրէն քննադատել է Մինիորայի կառավարութեանը լիբանանահայութեան կամքը անտեսելու համար:

ՀԱՅԱՍՏԱՆ ԳԱԼԸ ԿԱՐՈՂ Է ՃԱԿԱՏԱԳՐԱԿԱՆ
ԼԻՆԵԼ ԱՏՐՊԵՅՃԱՆՑԻՆԵՐԻՆ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅՔ-Ֆէ»։ Ատրպէյճանցի 11 լրագրողներ եւ իրաւապաշտպանը յայտնուել են քաղաքացիութիւնից զրկուելու վտանգի առջեւ տակ նրա համար, որ համարձակութիւն են ունեցել 5 օր անցկացնել Հայաստանում:

Ատրպէյճանական «Քաղաքացիական Համերաշխութիւն» երիտասարդական կուսակցութիւնը պահանջել էր զրկել քաղաքացիութիւնից Ատրպէյճանի Հէլսինկեան Ազգային կոմիտէի նախագահ Արգու Աբդուլաեւային եւ այն 10 մասնակիցներին, ովքեր Օգոստոսի վերջին մասնակցել են «Վստահութեան վերականգնում» ճամբարի աշխատանքներին, որը անց էր կացուած Վանաձորից ոչ շատ հեռու գտնուող «Գուգարք» ճամբարում: Ըստ յայտարարութեան հեղինակների, «դաւաճանութիւն է անցկացնել հանգիստ մի երկրի տարածքում, որը գաւթել է երկրի 20 տոկոսը, իրագործել է խռովարար հոլոքոստը՝ 20-րդ դարի ամենաարիւնալի ցեղասպանութիւններից մէկը»:

Հետաքրքիր է, իսկ ինչպիսին կը լինէր յայտարարութեան հեղինակ երիտասարդ ատրպէյճանցիների ցատումը, եթէ նրանք իմանային,



Ատրպէյճանցի 11 լրագրողներ եւ իրաւապաշտպանը Հայաստանի մէջ

որ իրենց համաերկրացիները ոչ միայն Հայաստանում հանգստացել են, այլեւ ընկերացել են իրենց հասակակից հայաստանցի եւ արցախցի երիտասարդների հետ: Ընդ որում, արցախցի մասնակիցների մեծ մասը անմիջականօրէն իր վրայ է գրացել ատրպէյճանական հրթիռների տարափը, հարազատ է կորցրել, անգամ ծնող ու ամուսին, բայց դա նրանց չխառարեց սերմել ատրպէյճանցի երիտասարդների ձեռքը, ընկերանալ, յուզուել եւ արտասուել միմեանց հրաժեշտ տալուց:

ԻԼՅԱՍ ԱԼԻԵՒ. «ՆԱԻԹԱՅԻՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԸ
ԹՈՅԼ ԿԸ ՏԱՆ ԼՈՒԾԵԼ ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ԱՌՁԵՒ
ԾԱՌԱՅԱԾ ԲՈԼՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏՈՒՑ»։ Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիևը համոզուած է, որ եթէ չլինէին նաւթային ռազմավարութիւնը եւ Պաքո-Թբիլիսի-Ջէյհան նաւթատարը, երկիրը կարող էր լուրջ տնտեսական եւ քաղաքական խնդիրներ առաջ կանգնել:

«Այդ երկու գործօնները ապահովում են Ատրպէյճանի երկարատեւ զարգացումը», - ըստ ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի, Ապրէրոնի շրջանում յայտարարել է Իլհամ Ալիևը:

Պաշտօնական տուեալներով, այս տարուայ առաջին 7 ամիսներին արդիւնաբերական արտադրութիւնը Ատրպէյճանում աճել է 41,8 տոկոսով, համախառն ներքին արդիւնքը՝ 35,1 տոկոսով:

«Նաւթից ստացուող մեծ եկամուտները թոյլ կը տան լուծել Ատրպէյճանի առջեւ ծառայած բոլոր խնդիրները», - յայտարարել է Իլհամ Ալիևը:

Ըստ վերջին տուեալների, նաւթի վաճառքից ստացուող եկամուտները Ատրպէյճանում արդէն գերազանցել են 3 միլիարդ տոլարը, իսկ մինչեւ տարեվերջ կարող են հասնել 4 միլիարդ տոլարի:

Ապրէրոնի շրջանի բնակիչների հետ հանդիպման ժամանակ Ատրպէյճանի նախագահը նաեւ խոստացել է «բարձրացնել աշխատավարձերը եւ կենսաթոշակները, շարունակել պայքարը գործազրկութեան եւ աղքատութեան դէմ»:

ՎԱՐԴԱՆ ՕՍԿԱՆԵԱՆ

Շարունակուած էջ 1-էն

«Նաեւ խօսք է գնացել՝ շատ նախնական, ժամկէտների առումով, թէ երբ է հնարաւոր անցկացնել նախարարների միջեւ յաջորդ հանդիպումը», - ըսած է Օսկանեան. - «Յաջորդ հնարաւոր վայրը, որտեղ երկուսս էլ լինելու ենք, դա Նիւ Եորքն է: Երկուսս էլ լինելու ենք այնտեղ՝ մասնակցելու ՄԱԿ-ի Գլխաւոր ասամբլեայի հանդիպումներին: Ես չեմ բացառում, որ, եթէ համանախագահները այդպէս որոշեն, եւ մենք համաձայնուենք, հնարաւոր է Նիւ Եորքում հանդիպում ունենալ: Բայց դեռեւս որեւէ կոնկրետիկա այս կապակցութեամբ չկայ»:

Լրատուամիջոցներում տեղ գտած տեղեկութեան վերաբերեալ, թէ հաւանական է, որ Քոչարեանն ու Ալիևը հանդիպին Մինսկի մէջ՝ ԱՊՀ գագաթնաժողովի օրերուն, գալիք Հոկտեմբեր 17-ին:

Հայաստանի Արտաքին գործոց նախարարը Փարիզի մէջ հանդիպումներ ունեցած է նաեւ Ֆրանսայի բարձրաստիճան պաշտօնեաների հետ. - «Ես այսօր երկկողմ հանդիպում եմ ունեցել Ֆրանսայի Արտաքին Գործերի նախարար Դուստ-Բլազիի հետ՝ մեր համատեղ մամուլի ասուլիսից յետոյ, որի ընթացքում պաշտօնապէս յայտարարուեց ու հրապարակուեց Ֆրանսիայում Հայաստանի տարուայ ամբողջ ծրագիրը: Այն կը սկսուի Սեպտեմբերից Երեւանում՝ նախագահ Շիրակի այցելութեամբ»:

Խօսելով նախագահ Ժաք Շիրակի՝ Հայաստան կատարելիք պաշտօնական այցի մասին, Օսկանեան յայտնած է, որ ֆրանսական կողմը շուտով կը հրապարակէ այցի պաշտօնական ժամկէտները. - «Այցը արդէն կազմակերպուած է, եւ մենք մեծ ակնկալիքներով սպասում ենք Ֆրանսայի նախագահին»:

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎԱՏԱԿԵԼԻ ԱՂԲԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ ԼԻԲԱՆԱՆ ՀԱՅ ԽԱՂԱՂԱՊԱՅՆԵՐ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՆՊԱՏԱԿԱՅԱՐՄԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ

Աշխարհաքաղաքական նոր իրողությունների հենքին Լիբանանի հայ խաղաղարարների գործադիր ղեկավարությունը հարցն այսօր արժարժուեց Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի (ՌԱՀՀԿ) կազմակերպած սեմինարում, որին հրավիրվել էին ՀՀ արտաքին եւ պաշտպանական գերատեսչությունների ներկայ ու նախ-

կատությունների ներկայացուցիչներ: Օրակարգը կրում էր «Հայ խաղաղապահներ Լիբանանում. Pros and Cons» խորագիրը: Փորձագիտական սեմինարը քննարկում էր բացելով ու նրա մասնակիցներին ողջունելով՝ Մեծ Մերձավոր Արևելքում ուղղակիորեն ճարտարապետությունում Հայաստանի հնարավոր դերակատարությունների տեսլականը ներկայացրեց ՌԱՀՀԿ



ՌԱՀՀԿ-ի կազմակերպած սեմինարի մասնակիցներն իսու մը մը

կին պատասխանատուներ, փորձագիտական մակարդակով խնդրին տիրապետող անձինք, վերլուծաբաններ, հասարակական-քաղաքական գործիչներ, անկախ դիտորդներ ու զանգուսածային տեղե-

հետազոտությունների ղեկավար Ստեփան Սաֆարեանը: «Այն, ինչ տեղի է ունենում Մերձավոր Արևելքում, անտարակոյս, դուրս է արաբա-խարայեցիական հակամարտության հարթությունից եւ առնչվում է տա-

րածաշրջանում ձեւավորվող նոր իրողություններին: ՀՀ արտաքին քաղաքականությունը չի կարող անտարբերորեն շրջանցել առկա զարգացումները: Այն պէտք է եւրոպական քաղաքակրթական ու անվտանգությունների շահերի, խաղաղարարությունների ոգով եւ ի տրիտուր արաբական աշխարհի հետ աւանդական ջերմ յարաբերությունների, ուրոյն դեր խաղալ տարածաշրջանում խաղաղության ամրապնդման գործում: Խաղաղապահ առաքելությունները Հարավային Լիբանանում, ուր հազարավոր հայ ընտանիքներ են ապրում, այդ հնարավորություններից մէկն է»,- ասաց Սաֆարեանը: Մերձավոր Արևելքում ընթացող զարգացումների եւ ՀՀ հնարավոր դերքորոշման թեման լուսաբանեց Երեւանի պետական համալսարանի դասախոս Դաւիթ Յովհաննիսեանը: Ի՞նչ ցուց տուեց արաբա-խարայեցիական առճակատում: Զեկուցողի հայեացքով՝ այն նախեւառաջ թուլացրեց ԱՄՆ-ի դիրքերը, իրանին հնարավորություն ընձեռեց իր միջուկային ծրագրերից առժամանակ շեղել միջազգային հանրություն ուշադրությունը, Սիրիան չկարողացաւ ապացուցել, որ այդ պատերազմն արդիւնք է Լիբանանից իր գործերի դուրսբերման, իսկ Իսրայելի բանակի ու հետախուզությունն ամենագործության մասին առասպելը յօդս ցնդեց: «Հայաստանը չի կարող անտարբեր հետեւել Լիբանանում ընթացող պատերազմին, քանի որ այնտեղ մենք ունենք բաւականին մեծ համայնք եւ կաթողիկոսարան», - խաղաղապահ առաքելությունը Հայաստանի մասնակցություն մէջ միանշանակ դրական տարրեր է տեսնում ղեսպան Յով-

հաննիսեանը: ՀՀ պաշտպանությունն նախկին նախարար, գեներալ-լեյտենանտ Վաղարշակ Յարութիւնեանի ղեկոյցում շօշափուեց լիբանանեան խաղաղարար ուժերի կազմում հայկական ներկայությունն ու ազմական դիտանկիւնը: Գեներալը նոյնպէս համոզուած է. «Հայաստանը պիտի անպայման մասնակցի խաղաղապահ ուժերի կազմում՝ ճշտորոշելով ասպից մասնակցությունն ճիշտ ձեւը. դա մեր պարտքն է, որովհետեւ Լիբանանի հետ առկայ են պատմական խոր, սերտ յարաբերություններ, ունենք մեծ համայնք»: Ըստ նրա, նաեւ Իսրայելի շահերից է բխում խաղաղարար ուժերի ներկայությունը Լիբանանում, որպէսզի այդ տարածքից Իսրայելի քաղաքները չհրթրակոծուեն: Յարութիւնեանի կարծիքով՝ կատարում է մի առաքելությունը, որ բխում է թէ՛ երկու պետությունների, թէ՛ «Հրդպոյլայի» եւ թէ՛ հայկական համայնքի շահերից: Արաբ-խարայեցիական հակամարտությունը տուած իր գնահատականները շարադրելիս Հայաստանի առաջադիմական-ազատական կուսակցությունն քաղաքական քարտուղար է դուրսդր Անտիսեանն էլ ընդգծեց իր պատմական բնօրրանում Իսրայելի պետությունն իսրայել ու ստեղծագործաբար ապրելու իրաւունքի հանգամանքը: Լիբանանի գործադիր ղեկավարը ուղարկելուց առաջ, ինչպէս գտնում է բանախօսը, պէտք է նժարել մեր հետաքրքրությունները, ճշտել մանդատը: «Նախքան նմանօրինակ պատասխանատու որոշում կայացնելը պէտք է անցկացնել

Շաբ.ը էջ 6



Wahib's
MIDDLE EAST RESTAURANT
الشرق مطعم
MEDITERRANEAN LEBANESE FOOD



Wahib

COME IN AND ENJOY OUR PATIO AND THE FINEST SHISA "HOOKAH"

CATERING FOR ALL OCCASION

FAMILY ENTERTAINMENT
BANQUET HALL
EVERY
FRIDAY ~ & ~ SATURDAY
NIGHT
INTERNATIONAL ~ ARABIC
CALL FOR RESERVATION



MOUHAMAD SALEM
& HIS BAND ~ VARTAN / NAZO & AMIR



BELLY~DANCING

910~E.MAIN ST, ALHAMBRA, CA.
TEL 626-281-1006 626-587-1048
FAX 626-281-3641

PHOTO / CONCEPT- J / D - 2006 ©TEL(626) 795-4493

ԱԶԳԱՅԻՆ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՈՃԻՐ

Սփիւռքի եւ Հայրենիքի միասնականութեան համար ուղղագրական միասնականութեան անհրաժեշտութիւնը անվիճելի իրականութիւն մըն է: Հայաստան պէտք է սթափ իր անհասկնալի թմրութենէն եւ վերադառնալ 1600 տարուայ Մեսրոպեան ուղղագրութեան:

Մեր Հայրենի իշխանութիւնը, երեսփոխանները, պետական պաշտօնեաները, մտաւորականները, դասախօսները, խմբագիրները, խմբագրապետները, լրատուական հաստատութիւնները, մէկ խօսքով բոլոր հայերէն խօսողները ոչ միայն պէտք է սթափին ու Մեսրոպեան ուղղագրութեամբ գրեն, այլ պէտք է թմրութենէ սթափին ու տեսնեն, թէ իրենց գրած ու խօսած հայերէնը աչնպէս աղաւաղուած է, ինչպէս աղաւաղուած է իրենց ուղղագրութիւնը: Հայերէնի գրական ու խօսակցական լեզուին մէջ առած են աչնպիսի բառեր, որոնք հայերէնի հետ կապակցութիւն չունին: Խօսակցական լեզուին մէջ երբեմն, շեշտը կը դնենք «երբեմն»-ին վրայ, օտար բառեր կրնան սպրդիլ, սակայն ոչ գրական լեզուին մէջ: Յատկապէս լրագրողին, խմբագրապետին, դասախօսին պարտականութիւնն է իր յօդուածները գրել անաղարտ հայերէնով՝ առանց օտար բառերու գործածութեան, որպէսզի իր ընթերցողին, յատկապէս Սփիւռքի ընթերցողին, աչքերը աչլանդակ բառերու տեսարանին առջեւ չգտնուի եւ իր գիտցած հայերէնն ալ բոլորովին չմոռնայ: Հայաստանի հեռատեսիլի եւ ձայնասփիւռի կայաններու խօսնակներն ալ մաս կը կազմեն լեզուի աղաւաղման, որոնց տուած լուրերը շատ անգամ անհասկնալի է Սփիւռքահայուն, որ Հայրենի լուրերուն համար աչդ կայաններուն կը դիմէ:

Լրագրողներու, լրատուական հաստատութիւններու գրչին համար բնական եղած է օտար բառերու գործածութիւնը: Եղածը պարզ անհոգութիւն մը չէ, անտարբերութիւն չէ: Եղածը օտարամոլութիւն է: Մշակութային ոճիր է: Երբ մեր մշակութային կոթողներուն ուրիշներէ փճացման մասին սիւնակներ կը գրեն, կ'երեւի չեն անդրադառնար, թէ ամենամեծ փճացումը իրենք կը գործեն: Միթէ հայերէն բառեր չկա՞ն, որ կը գործածուին կօպիցիա, մինիստր, բիւջէ, ֆինանսավորում, կոնֆլիկտ, կոուպցիա, չինովիկ, կինօ, ռեժիսոր, ֆոտո, վիդեո, ժուռնալիստ, ռեպորտաժ, ինֆորմացիա, ռէկտոր, ղէկան, ֆակուլտետ, ինստիտուտ, կուրս, տիրիժոր, ֆիրմա, պիզնէս, ժեստ, ֆութբոլիստ, շախմատիստ, դիվիզիա, ժեներալ, մոտելալորել, ֆիքսել, պլանալորել, ակտիվացնել, սոցիալական, տրանսպորտ, էներկիա, պրոֆեսիոնալ, ավտոմեքենա, ակցիա, տեխնիկական, տերմինաբանական, նյարդային ... բառերը: Բառերու աչս շարքը կարելի է երկարել ու երկարել:

Աչնքան ատեն որ մեր հայրենիքի մէջ աչսպիսի բառապաշար կը գործածուի եւ Մեսրոպեան ուղղագրութեան չվերադառնալու համար անիմաստ պատճառաբանութիւններ կը հղովուին, մշակութային միասնականութեան քարոզչութիւնը կ'ըլլայ ինքնախաբէտութիւն, նման «Մէկ ազգ, Մէկ եկեղեցի» ինքնախաբէտութեան, որուն քարոզչներն իսկ չեն հաւատար իրենց ըսածին ու չեն գործադրեր զայն: Ուղղագրական ու լեզուական

աչս խեղաթիւրումները սահման չեն ճանչնար: Կու գան ու կը տարածուին Սփիւռքի մէջ ալ: Սփիւռքային հեռատեսիլային ու ձայնասփիւռային կայաններ ալ վարակուած են աչս ախտէն: Խօսնակներուն բերնէն, առաջմ երբեմն-երբեմն, ոչ-հայերէն, անհասկնալի բառեր կ'ելլեն:

Սովետական կարգերը շատոնց վերջ գտան: Աչլես «վեր»-էն հրահանգ ստանալու օրերը անցան: Եթէ նոյնիսկ «վեր»-էն հրաման կը սպացուի, Հայրենի ղեկավարութիւնը Մայրենիով զբաղելու ժամանակը չունի: Ան իր աթոռները պահպանելու, ազգականներու, բարեկամներու գործ հայթայթելու հրահանգներով զբաղ է:

Եթէ մեր Հայրենի մտաւորականներն ու լրագրողները միասնաբար որոշեն չգործածել աղաւաղեալ, ոչ-հայերէն բառեր իրենց գիրքերուն, յօդուածներուն, լրատուութիւններուն մէջ, կ'ըլլան ամենամեծ հայրենասէրները: Կ'ըլլան յաջորդ սերունդներուն օրինակելի առաջնորդները:

«ԼՈՒՍՏԱՄ»
ԹՂՐԱՆՔՕ

ԼԻԲԱՆԱՆ ՀԱՅ ԽԱՂԱՂԱՊԱՅՆԵՐ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՆՊԱՏԱԿԱՅԱՐՍԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ

Շարունակուած էջ 5-էն

կարծիքների բախումներով չազնցած բազմակողմանի քննարկումներ, մշակել ընդհանուր դիրքորոշում, որպէսզի վերջնարդիւնքում չտուժի մեր պետութեան վարկը», - նկատեց Անտինեանը:

Ձեկուցումների շուրջ ծաւալուած հարցուպատասխանին եւ մտքերի փոխանակութեանը մասնակցեցին Լրատուամիջոցների կովկասեան ինստիտուտի տնօրէն Ալեքսանդր Իսկանդարեանը, Հանրային ռադիոյի մեկնաբան Թաթուլ Յակոբեանը, Հայաստանում Եգիպտոսի արաբական հանրապետութեան դեսպանորդ Աբդելմոսէն Սալիդ Շաֆէյը, Հայաստանի ժողովրդական կուսակցութիւնից Ռուզան Խաչատուրեանը, Ազգային ժողովրդավարական միութիւնից Անահիտ Արդեանը,

նր, «Ժառանգութիւն» կուսակցութիւնից Գէորգ Կալենչեանը, Մոսկուայի տնտեսագիտութեան ինֆորմատիկայի եւ վեհակագրութեան պետական համալսարանի դասախօս Եւգենի Պոնոմարեովը, Երեւանի պետական համալսարանի դասախօսներ Հայկ Դեմոյեանն ու Հայկ Քոչարեանը, «Նոյեան Տապան» գործակալութեան վերլուծաբան Դաւիթ Պետրոսեանը, «Ազատագրուած տարածքների պաշտպանութիւն» հասարակական նախաձեռնութեան ներկայացուցիչ Արմէն Աղայեանը եւ ուրիշներ: Տեսակէտների բացարձակ մեծամասնութիւնը Լիբանան հայկական գործառնործ գործուղելու օգտին էր: Պաշտօնական Երեւանի դիրքորոշումը արտացոլուեց համապատասխան գերատեսչութիւնների ներկայացուցիչների հերթական բացակայութեամբ:

Ձեր ծանուցումները Վստահեցէք «Մասիա» Շաբաթաթերթին

ՕԳՆԵՆՔ ԼԻԲԱՆԱՆԻՆ
Անգամ մը եւս վայրագ բռնարարներու եւ տակաւ շարունակուող պատերազմի զոհ կ'երթայ բովանդակ Լիբանանը:
Արդարեւ, օդային ուժերու զոհ գացած են բազմաթիւ անմեղ մարդիկ, տեղաբնիկ դարձած են անլիք 800 հազար հոգի, որոնք կարիք ունին ամէն տեսակի օգնութեան (հագուստ, սնունդ, դեղորայք եւ արքայապահ): մէկ խօսքով Լիբանան դարձած է «Աղէտի Երկիր»:
Լիբանանահայութիւնը եւս կ'ապրի դժուարին օրեր: Հայկական թաղամասեր կը դիմագրաւեն կեցողային, առողջապահական, սնունդի արաբական, ջրի եւ էլեքտրական հոսանքի դժուարութիւններ, որոնք հոգալու պարտականութիւնը ստանձնած են մեր թաղաքական եւ բարեսիրական կազմակերպութիւնները: Տեսնական դժուարութիւններու եւ անգործութեան պատճառաւ սկսած է բազմապատկուիլ չքատի մայրեր թիւը:
Հայկական կազմակերպութիւնները նաեւ օգնութեան մեղք կ'երկարեն երկրի հարաւային շրջաններէն հայկական թաղամասերը ժամանած գաղթականներուն:
Հայկական Կրթական բարեսիրական Միութիւնը (Հ.Կ.Բ.Մ.) իր դարմանատուները եւ կրթական ու բարեսիրական կեդրոնները առանց խտրութեան բացած է բոլորին առջեւ, օգտակար հանդիսանալով եւ հոգալով ժողովուրդի կարիքներուն:
Ռազմական գործողութիւններու աւարտէն ետք իսկ, երկար ժամանակ, լիբանանահայութիւնը պէտք պիտի ունենայ հայաստանի եւ սփիւռքի օգնութեան՝ իր գոյութիւնը պահպանելու եւ արտագաղթի ներքին կամ արտակալ դժուարութիւնները կարգաւորելու:
Ռուսի, կոչ կ'ուղղենք սփիւռքահայութեան՝ գործնականօրէն օգնակցի աղէտաւար Լիբանանի կարօտեալներուն եւ անյապաղ մարդասիրական օժանդակութիւն ցուցաբերել հայութեան:
Տուրքէ գերծ մեր գումարները հաճեցէք առաքել կողքի հասցէին.
Հ.Կ.Բ.Մ. ԿԵԴՐՈՒՄԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
Please write your tax-deductible contributions to:
A.E.B.U. - Lebanon Fund
1060 North Allen Avenue
Pasadena, CA 91104
U.S.A.
FOR WIRE TRANSFERS:
Bank Of America
Account # : 02300-42330
Routing # : 026009593

ՏԵՍԱԿԵՏ

ԱՆՊԱՄ ՄԸ ԵՒՄ «ՄԵՐ ՎԱՅՐԵՆԻՔ» ՕՐՎՆԵՐԳԻ ՄԱՍԻՆ

ԵՐԱԺՇՏԱԳԷՏ՝ ԳՐԻԳՈՐ ՓԻՏԷՃԵԱՆ

Ինչպես «Մեր Հայրենիք» Օրհներգի Հեղինակային Ինքնութեան Հարցը» խորագրով նախորդ յօդուածին մէջ ըսած էի թէ՛ յաջորդական երկու յօդուածներով պիտի խօսիմ նախ՝ երգի բնագրի հեղինակային ինքնութեան մասին, ապա՝ երգի երաժշտութեան հեղինակային պատկանելիութեան մասին, ինչպէս նաեւ արդեօք ժամանակն է ունենալու նոր քայլերդ մը նիւթին շուրջ, նախորդ յօդուածովս աւարտած ըլլալով առաջին նիւթս, այսու հետեւաբար, պիտի խօսիմ երկրորդ նիւթին մասին:

«Մեր Հայրենիք»-ի խօսքի հեղինակին ինքնութիւնը, եթէ երբեք տակաւին չէ յատկացած այն իմաստով, որ 18 տուներէ բաղկացած քերթուածը, բացի վերջին 3 տուներէն, որոնք յատկօրէն Միքայէլ Նալբանդեանի ստեղծագործութիւնն են, ու այս կէտին մէջ Դոկտ. Ա. Չելեպեանի եզրայանգումը ճիշդ է, քերթուածին մնացեալ 15 տուները սակայն, իտալական բանաստեղծութեան մը թարգմանութիւնն են, թէ չէ Միքայէլ Նալբանդեան, 1859ին իտալիա գտնուած ժամանակ թերթերու մէջ կարդալով իտալացիներուն մղած ազատագրական պատերազմի լուրերն ու կռիւէն վերադարձողներուն պատմածներն իրենց փորձառութիւններուն մասին, անոնցմէ մին ըլլալով «Մեր Հայրենիք»-ին նիւթը կազմող կամաւորին պատմածը որմէ մեծապէս տպաւորուած ու ներշնչուած կը շարադրէ իր «Իտալացի Աղջկան Երգը» 1859 թուականից հոյակապ բանաստեղծութիւնը: Այս երկուքն սակայն, առաջինը հաւանական կը թուի ըլլալ: Ըսեմ թէ՛ ինչու:

1950-ական թուականներուն, երբ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքին ուսանող էի, երաժշտութեան ուսուցիչս, Պրն. Համբարձում Պէրպէրեան, երբ նոր վերադարձած էր համերգային շրջագայութենէ մը, դասերէն մէկուն ընթացքին, աշակերտներուս պատմեց նաեւ թէ՛ ինչպէս անակնկալի էր եկած, երբ իտալիա գտնուած ժամանակ, ճաշարաններէն մէկուն մէջ եղած ատեն, յաճախորդները զուարճացնող նուագախումբը, նուագած երգերու շարքին յանկարծ նուագած էր մեզի ծանօթ «Մեր Հայրենիք»ը: Դասընկերներս եւս կը յիշեն Պրն. Պէրպէրեանին այս պատմածը:

Բոլոր ընթերցումներուս մէջէն միակ հաւաստի աղբիւրը այս է եղած: Հաւաստի կ'ըսեմ, որովհետեւ խորունկ վստահութիւն եւ հաւատք ունէի եւ ունիմ ուսուցչիս երաժշտական լսողութեան եւ պատմածին վրայ:

«Առակա գիւնջ ցուցանէ»:
Նախ, ըսեմ որ համոզիչ պիտի չըլլար հաւաստիացնելու թէ՛ իտալացի մը առեր է հայու մը քերթուածն ու եղանակաւորելով զայն տարածեր է իր ժողովուրդին մէջ: (Իտալական, Garibaldi յեղափոխական կռիւներու մասին, իտալական գրականութիւնը ունէր անոնց նուիրուած երկեր: Իտալացի երաժիշտը պէտք չունէր հայերէն քերթուածին դիմելու):

Հետեւաբար, վերապահ վստահութեամբ սխալած չենք ըլլար, եթէ «Իտալացի Աղջկան Երգը»-ի հեղինակը ընդունինք որպէս իտալացի troubadour (աշուղ) մը, որ տեսակային (genre) ստեղծագործութեան իւ-

րայատկութեան համաձայն, թէ՛ բառերը եւ թէ՛ երաժշտութիւնը միասնաբար կը յօրինէր նոյն աշուղը:

Ինչպէս մեզի համար մեր ազգային-հայրենասիրական երգերը անմոռանալի երգեր են եւ մանաւանդ որ, հայրենի ներկայ ազատ վարչակարգին տակ վերաբեկողութեամբ անոնք, բոլորի շրթներուն վրան են, ինչո՞ւ, ոչ թէ ենթադրել, այլ հաստատօրէն չհաւատալ այդ երգին գոյութեանը:

Եթէ իտալական եւ հայկական յեղափոխական, ազատագրական շարժումները, իրարու հետ բաղդատել ուզենք, ճիշդ է որ ժամանակի տեսակէտով մերը քիչ մը աւելի ուշ տեղի ունեցաւ, սակայն կը տեսնենք որ նման ոգիով, նման նպատակով ու առաջադրանքներով եւ նման արդիւնքներու հասած շարժումներ եղած են անոնք: Այսպէս, երբ իտալացիներ կ'ունենային Giuseppe Garibaldi մը, հայեր կ'ունենային Անդրանիկ Օզանեան մը: Երբ անոնք կը տիրանային իրենց հողերուն, մենք եւս կը տիրանայինք մեր հողերուն. (մեր պարագային, դժբախտաբար, միայն մէկ փոքր մասին): Եւ երբ անոնք, որպէս իրենց գոհաբերութեանց ու յղթանակի պատկոյն հիմնեցին իտալիոյ թագաւորութիւնը, մենք ալ շնորհիւ մեր յեղափոխականներու անձնուրաց գոհողութիւններուն եւ մարտնչումներուն, Հայաստանի Արեւելեան շրջանին մէջ 1918 Մայիս 28ին ունեցանք մեր ազատ-անկախ Հայրենիքն ու հիմնեցինք Հայաստանի Հանրապետութիւնը:

Եթէ երբեք մեր ազգային-յեղափոխական երգերը հասեր են մեզի եւ տակաւին խանդավառութեամբ ու ոգեւորութեամբ կ'երգենք զանոնք, վստահաբար, իտալիոյ մէջ եւս կարելի պիտի ըլլայ գտնել իրենց յեղափոխական երգերուն ծանօթ անձեր:

Պատմութենէն գիտենք թէ՛ ինչպէս 19րդ դարուն, Կ. Պոլիս բացուեցաւ իտալիոյ երաժշտական մշակուցութիւն, ուրկէ կու գային արուեստագէտներ, երաժիշտներ, կատարողական խումբեր՝ թատերական, օբէրային եւ ուրիշներ:

Տեսէք թէ՛ «Հայաստանի Կոմպոզիտորների եւ Երաժշտագէտների Միութիւն»-ի նախագահը՝ յարգելի կոմպոզիտոր Ռոբերտ Ամիրխանեան ինչ կ'ըսէ «Մեր Հայրենիք»-ի մասին. «Փորձած եմ ուսումնասիրել եւ գտնել ծագումը մեր քայլերգի երաժշտութեան: Գտած եմ, որ եղանակը 19րդ դարու կէսերուն երեւցած է Կ. Պոլսոյ երաժշտանոցին մէջ որպէս երգելու հետեւող աշակերտներուն ձայնամարզութեան եղանակ»: (ArmeniaNow.com, June 2, 2006):

Պրն. Ամիրխանեանի այս արտայայտութենէն կարելի է հետեւցնել որ, «Մեր Հայրենիք»-ին եղանակը ոչ միայն արդէն իսկ գոյութիւն ունէր 19րդ դարու կէսերուն իտալիոյ մէջ, այլ՝ անոր վայելած ժողովրդականութեան պատճառաւ գացած էր մինչեւ Կ. Պոլսոյ Երաժշտանոցն ու հայ եւ օտար պոլսեցիներուն:

Առարկողներ կրնան վերագրել զայն Կ. Պոլսոյ Երաժշտանոցին մէջ դասաւանդող երաժիշտի մը: Այլ խօսքով, կրնար եղանակը Կ. Պոլսոյ մէջ յօրինուած ըլլալ Մ. Նալբանդեանի խօսքերուն (թարգմանութիւն, թէ անհաստական ստեղծագործութիւն: Այս մասին նախորդ յօդուածին մէջ գրած էի), վրայ, ապա՝

Երաժշտանոց մուտք գործած: Այս, տրամաբանական ըլլալ կը թուի, բայց այդպէս չէ, քանի որ Պրն. Համբարձում Պէրպէրեան, ինչպէս վերը ըսի, անձամբ, իր ականջներով լսած էր զայն իտալիոյ ճաշարաններէն մէկուն մէջ նուագուած: Հետեւաբար, երաժշտութիւնը անկասկած իտալական է: Աւելին, անոր երաժշտական շեշտադրութիւնը չի համապատասխաներ քերթուածին հայերէն լեզուի հնչաբանական եւ շեշտադրական օրէնքներուն:

Անցեալ տարի, երբ Հայաստան գացած էի, ազնուափայլ երաժշտագիտուհի՝ Գոհար Շագոյեան գիս Ռոբերտ Ամիրխանեանի հետ ծանօթացնելու համար տարաւ վարպետին գրասենեակը:

Մեծ հաճոյքով իրարու ծանօթացանք եւ հետաքրքրական գրոյցի ընթացքին, երբ «Մեր Հայրենիք»-ը խօսակցութեան նիւթ դարձած էր, Պրն. Ամիրխանեան արտայայտուեցաւ նաեւ քայլերգին մեղեդային կառուցուածքի եւ բառային նշանակութեան յարաբերակցութենէն բխող երգի հոգեբանական երեւոյթի մասին ըսելով որ, «Երբ կ'ըսենք «Մեր Հայրենիք», կ'ակնկալենք լսել դէպի վեր ընթացող պայծառ, փայլուն եւ բարձր տրամադրութիւն ստեղծող մեղեդիական գիծ մը: Մինչդեռ, անոր մեղեդին ճիշդ հակառակ ուղղութեամբ, դէպի վար ընթանալով ճիշդ հակապատկերը կը ստացուի»:

Այս բոլորով կու գանք հաստատելու, որ «Մեր Հայրենիք»-ի երաժշտութեան հեղինակը իտալացի մըն է: Թէ ո՞վ է ան, մեր ձեռքի տակ եղած նիւթերէն եւ ծանօթ աղբիւրներէն, երբ երգի առաջին հրատարակութենէն՝ 1861էն մինչեւ օրս, այսինքն 145 տարիներու ընթացքին, կարելի չէ եղած ստուգել եւ ճշդել ան, հիմա եւս չենք կրնար ըստածներուն վրայ շատ բան աւելցնել, քանի որ ծանօթ նիւթերն ու աղբիւրները օգտագործուած եւ սպառած են: Ասով հանդերձ, կայ տակաւին յոյսի նշոյլ մը, որ հետեւեալն է:

Եթէ երբեք նորութիւն մը պիտի բերուի այս հարցին առնչութեամբ, այդ պիտի ըլլայ իտալերէն լեզուի, պատմութեան, ու երաժշտութեան քաջածանօթ անձի մը կամ անձերու կողմէ պրպտումովը իտալական արխիւներու մէջ 1848-1860 թուականներուն հրատարակուած գրականութիւնը՝ քաղաքական, ինչպէս թերթեր, գրական, ինչպէս բանաստեղծութիւններ, երաժշտական, ինչպէս ազատագրական-յեղափոխական երգարաններ, գրականութիւն, ձայներիգներ, հար-

ցուփորձելով տարեց երգողներ եւ նուագողներ, եւ այլն: Ու այս աշխատանքին համար յարմարագոյն եւ լաւագոյն թեկնածուները կրնան ըլլալ Միքիթարեան հայրերը: Անոնց ճիտին պարտքը պէտք է ըլլայ այս ծրագրին ի կատար ածուածը: (Եթէ նոյնիսկ դադրի ան Հայաստանի Հանրապետութեան Օրհներգը ըլլալէ):

Մինչ, երկար տարիներով, խղճմտանքի տէր եւ նախանձախնդիր անձեր մտքի, ժամանակի, ուժի, տաղանդի սպառիչ աշխատանքներով տքնեցան եւ տակաւին կը ջանան «Մեր Հայրենիք» օրհներգին հեղինակային պատկանելիութեան խիստ դժուարին եւ կնճուտ հարցը լուծել, անդին՝ ըլլայ արտասահմանի մէջ կամ ըլլայ Հայաստանի մէջ մէկ բառի փոփոխութեամբ՝ «մշակուած» բառին փոխարէն «երաժշտութիւն» բառին գործածումով, 145 տարիներու վրայ տարածուող երաժշտութեան հեղինակային պատկանելիութեան շփոթ վերջ գտած է, «Մեր Հայրենիք»-ին երաժշտութեան հեղինակը դարձնելով Բարսեղ Կանաչեան:

Բարսեղ Կանաչեանէն սերունդ մը առաջ ապրող եւ գործող Քրիստափոր Կարա-Մուրզա, ինչպէս նախորդ յօդուածին մէջ ըսեր էի, արդէն իսկ մշակած էր «Մեր Հայրենիք»-ը, որուն մայր եղանակը նոյն եւ նման է Բարսեղ Կանաչեանի մշակուածի մայր եղանակին:

Երբ, երաժշտական անպատասխանատու կամ անհաստական հրատարակութեանց մէջ այսպիսի սխալներ սպրդին, պատահականութեան վերագրելով զայն կարելի է անտես առնել: Սակայն, երբ հայրենի պաշտօնական մարմիններէն (պետական ու երաժշտական) կը ծնի այդ սխալը, այն ատեն հարցը մտահոգիչ կը դառնայ: Ահա կարեւոր երկու օրինակներ միայն:

Ա. օրինակ.
Շահին Շահի կողմից հայ պետականութիւնը կործանելուց անմիջապէս յետոյ գրած իր «Եղծ Աղանդոց» ուսումնասիրութեամբ եզնիկ Կողբացին ճակատաչին յարձակում գործեց գրուական գրադաշտականութեան դէմ, Սասանեան Պարսկաստանի պալատական կրօնի դէմ: Հայ ակնաւոր աստուածաբանը ելնում է այն նախադրեալից, որ հայերի գաղափարական հակառակորդները, թշնամիները երեքն են՝ նիւթապաշտութիւնը (յունական մատերիալիզմը), գրուականութիւնը եւ աղանդաւորութիւն (հիմնականում կանգ է առնում պաւլինեան եւ Մարկիոնի աղանդների վրայ): Նա այդ երեքի միջեւ նկատում է տրամաբանական կապ, յարակցութիւն: Նա գրուականութեան կեղծութիւնը հիմնաւորում է տրամաբանական գիտութեան դրոյթներով, իրաւագիտական փաստարկներով, աստղագիտութեան տուեալներով, մանկավարժական գործունէութեան արդիւնքներով եւ մարդկային պատմական գործունէութեամբ: Նա, ի մասնաւորի, կանգ է առնում չարի բնածին լինելու եւ ճակատագրականութեան գաղափարների հերքումով վրայ եւ ընդունում մարդուն Աստուծոյ կողմից տրուած կամքի ազատութեան դրոյթի ճշտութիւնը: Նրա քննական վերլուծութեան ուղղութեամբ թիւները եւ դառնում, երբ ընդգծում է, որ մարդիկ իրենց գործունէութեամբ հերքում են այդ գաղափարները, երբ հաւաքաբար բանակ են կազմում ու պայքարում չարի, նախադարձակի, թշնամու դէմ ու դաստիարակիչ, կրթական միջոցներով փոխում մարդուն:

ԱՊՍՏԱՄԲԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՍՏԵՂՄԱՆ ՓՈՒԼ

Սասանեան Պարսկաստանը աստիճանաբար գործադրեց այնպիսի միջոցառումներ, որոնք, ըստ նրա, պիտի առաջնորդէին մարգալանական Հայաստանի ինքնուրոյնութեան լրիւ վերացման ու հայ ազգի ձուլման: Աւարտական միջոցառումը կրօնափոխութեան պարտադրանքն էր: Այն գործադրուեց, երբ պարսիկները կարճեցին, որ հայերը խիստ թուլացել էին տնտեսական, զինուորական, կազմակերպչական, ընկերային, եկեղեցական ու հոգեբանական առումներով, երբ խաթարուել էին հայ ընկերութեան յարաբերութիւնների համակարգը:

Մարգալանական Հայաստանում ազգային միասնութիւնը ապահովում էին երեք ազգային հաստատութիւններ՝ թագաւորութիւնը, կաթողիկոսութիւնը եւ բանակը: Նրանք էլ կազմում էին նաեւ ազգային ոյժի հիմքը, ազգային գիտակցութեան նիւթական հենքը, ազգային գոյութեան երաշխիքը: 428-ին Սասանեանները վերացրին հայկական թագաւորութիւնը, Արշակունեաց թագաւորութիւնը: Բայց մնում էր բանակն ու Կաթողիկոսութիւնը: Նախարարները պահում էին իրենց զինուորական ուժը, բանակը, որոնց

ծառայութիւնից պատեհ առիթներով օգտուում էին պարսիկները: Բայց հայ Հազարապետութեան, Սպարապետութեան ու Կաթողիկոսի հովանաւորութեան տակ պահպանում էր հայ նախարարների ու բանակի միասնութիւնն ու ազգային պատկանելութեան բնոյթը: «Այս պատճառով էլ (ազգային այդպիսի բանակի առկայութեան պայմաններում-Գ.Ս.) աստուածապաշտութիւնը հրապարտ ու ինքնիշխան փայլում էր հայոց աշխարհում» գրում է Վարդանանց պատմիչ Եղիշէն:

Շուտով հրովարտակ ուղարկուեց Հայոց, Վրաց, Աղուանից, Լիւնաց, Զաւգէից, Կողտուաց Աղձնեաց աշխարհները, որտեղ Շահին Շահը գրում էր. «Մենք մտքերում դրել ենք անպատճառ վեր կենալ-գնալ Արեւելքի աշխարհը, աստուածների օգնութեամբ մեզ ենթարկել Քուշանների տէրութեանը, դուք, հենց որ այս հրովարտակը տեսնէք, շուտով, առանց ուշանալու, այրուձի ժողովեցէք՝ ինձանից առաջ, ներկայացէք ինձ Ապար աշխարհում»: Չկարողանալով գուշակել Սասանեանների այդ ծրագրի խարդախութիւնը իւրաքանչիւր երկրից միամտաբար, անտրտում եւ տիրասէր զգացումներով ղեկավարուելով կատարեցին իրենց զինուորական ծառայութիւնը: Հայրենի հողից բանակի հեռացումը նկատի ունէր երեք հանգամանք. Ա. երկրի ներսում թուլացնում էր հաւանական դիմադրութիւնը եւ Շահին Շահը ազատօրէն կարող էր իրականացնել ուժացման իր քաղաքականութիւնը Բ. Արտերկրում մղած մարտերում գոհուում էին հպատակ ժողովրդների զաւակները. Գ. Երկրից դուրս գտնուող զինուորների միջավայրում աւելի դիւրին էր դառնում բանակայինների կրօնափոխութիւնը ու նրան ունեցուածքի բռնազրուումը:

Ղեկավարուելով այն սկզբունքով, որ իր մէջ բաժանուած, անմիաբան տունը կանգուն չի կարող մնալ, Սասանեանները հրահրում են միջնախարարական, միջդասային վէճեր, կռիւներ: Նկատենք, որ միջ-

նախարարական կռիւներ ու վէճեր հրահրելը Սասանեան ծրագրի մաս էր կազմում: Վարդանի եւ Վասակի հակադրութեան, թշնամացման, առճակատման ուղղութեամբ Սասանեանները որոշակի աշխատանք տարան:

Միջնախարարական գոտութիւնների ծրագիրը նախ եւ առաջ իրականացում էր նախարարական աւանդական բարձր խախտելով, արժանաւորներին անտեսելով ու ստորադասելով եւ անարժաններին բարձրացնելով, տեղական պաշտօնատարներին պարսիկներով փոխարինելով: Հայ Հազարապետին փոխարինեց պարսիկով, մոգպետին կարգեց Հայաստանի դատաւոր, երբ աւանդաբար այդ պաշտօնը վերապահուած էր հայ հոգեւորականութեան: Հայաստանում աշխարհազիր անցկացնելու պատրուակով այնտեղ գործուղեց իր հաւատարիմ պալատականներից Դենշապուհին: Վերջինս գործադրեց հայ տնտեսութիւնը, հայ նախարարական ու եկեղեցական կարգը խաթարող միջոցառումներ: Եկեղեցին, որը ազատ էր հարկերից, հարկատու դարձրեց: Վանականներին ու միայնակներին հարկատու դարձրեց: Բոլոր հարկերը բարձրացրեց, գրեթէ կրկնապատկեց: Հարկեց աւերակ տեղերը, լեռները, անտառները: Նորանոր հարկեր մտցրեց: Հարկերը հաւաքում էին պետական արժանապատուութեամբ ու վայելուչ ձեւով, այլ աւազակաբարոյ, յափշտակելով, կեղեքելով: Թէեւ այդ անկարգութիւնները Շահին Շահը գործադրում էր բոլոր հպատակ ազգերի նկատմամբ, բայց աւելի Հայոց աշխարհի դէմ էր մարտնչում:

Այս բոլոր ճշնումներն ու կեղեքումները սպասուած արդիւնքը չտուին: Հպատակներին, մանաւանդ հայերին ծնկի չբերեցին: Պարսիկները որոշեցին անցնել հիմնական նպատակի գործադրման՝ քրիստոնէական եկեղեցու, կաթողիկոսութեան վերացումով չէզոքացնել հայ

Շար.ք էջ 15

PEACE through MUSIC
Ending Hate · Giving Hope · Bringing Joy

The Pasadena Human Relations Commission presents:
A Benefit Concert to Save Our Children from violence
Featuring a Wide Variety of Musical Talents
September 16, 2006
Saturday, 7:30 pm
At the First Church of the Nazarene of Pasadena

Master of Ceremonies
FURNELL CHATMAN
NBC 4 News Reporter

YIN TIN HUANG International Concert Pianist
MOLAN SHAMEED Nationality Renewed Jazz Musician
LUIZA International Singing & Recording Artist
THE HARMONIUM TRIO THE FBI HUNTER International Pianist
FBI-CHUN TSAI Renewed Violist
LING YAN Renewed Cellist
EDDIE CUNNINGHAM "Singing & Recording Artist"
YUVAL RON International Guitarist & Recording Artist
LIL MAX \$0 The World's Youngest Rapper
BASU International Singer & Recording Artist
RUTH DAVIS & THE MOUNTAIN CLIMBERS Acclaimed "Gospel" Singers-Dancers
LALA Lala Loiziano Performer

3700 E. Sierra Madre Boulevard, Pasadena, California 91107
Tickets \$15 at the door or by phone (seniors & students \$10)
Contact Nat Nehdar at (626) 351-8680; Terrie Gillen at (626) 799-6178;
Human Relations Commission (626) 744-4234
Deadline for phone orders is September 1, 2006.

ՎԱՐՑԱԶՐՈՅՑ

**ՏԵՐ ԸՇԲԻԳԸԼԻ (SPIEGEL)
ՎԱՐՑԱԶՐՈՅՑԸ ԱՄԱԴԻ ՆԵՇԱԴԻ ՐԵՏ՝
«ՄԵՆՔ ՎԱՍՏԱՏԱԿԱՍ ԵՆՔ»**

**ԼՐՆԴՈՆՈՒՄ ՏՊԱԳՐՈՒԱԾ ՔԵՅՃԱՆ
ՊԱՐՄԿԵՐՍՆԵՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻՑ
ԹԱՐԳՄԱՆՆԵՑ
ՆՈՒԱՐԴ ԶԱՐԳԱՐԵԱՆ
(Շարունակում են խորագրերը)**

- Դուք ուզում էք 60 տարի պատերազմից յետոյ մի ամբողջ ժողովուրդ նորից տեղահա՞ն լինի՞նք:

- Հինգ միլիոն պաղեստինցիներ 60 տարի է թափառական են, շատ զարմանալի է որ դուք 60 տարի առաջուայ Հոլոքոստի համար հատուցում էք տալիս եւ դեռեւս 100 տարի էլ պէտք է տաք, ինչո՞ւ Պաղեստինի ճակատագրի վերաբերեալ ոչինչ չէք ասում:

- Եւրոպան պաղեստինցիներին շատ է պաշտպանում, որովհետեւ մենք պատմականօրէն այս աշխարհամասի խաղաղութեան ամրապնդման գործում պատասխանատու ենք: Իսկ դուք այսպիսի պատասխանատուութիւն չունե՞ք:

- Այո, բայց բռնութեամբ եւ բռնագրաւելով եւ Հոլոքոստը կրկնելով, խաղաղութեան չեն հասնի: Մենք յարատեւ խաղաղութիւն ենք ուզում: Մենք պէտք է խնդիրը արմատապէս լուծենք: Շատ ուրախ եմ որ դուք ճշգրիտ մարդիկ էք եւ ընդունում էք որ պարտականութիւն ունէք Սիոնիզմը պաշտպանելու:

- Մենք այդ չենք ասում, Պրն. Գալապահ:

- Դուք ասացիք՝ իսրայէլացիներին:

- Պրն. Գալապահ, մենք Գոլոքոստի մասին ենք խօսում, որովհետեւ ուզում ենք Իրանի ատոմական զենքերի հաւանականութեան մասին գրուցել: Այդ է պատճառը որ Արեւմուտքը ձեզ վտանգաւոր է համարում:

- Որո՞չ խմբակցութիւններ, արեւմուտքում սիրում են ինդիւստրիալ եւ մարդկանց վտանգաւոր համարեն: Համեցէք, դուք ազատ էք դատելու՝ ինչպէս որ նկատում էք:

- Իսկական հարցը այս է, արդեօ՞ք ատոմական զենք էք ուզում պատրաստել ձեր երկրի համար:

- Իրաւունք տուէք բանավիճել: Կարծում էք մինչեւ ե՞րբ կարելի է մի քանի արեւմտեան հզօր երկրների խօսքով աշխարհին իշխել: Երբ մի անձնաւորութեան հանդէպ հակառակ են տրամադրւում, անմիջապէս սկսում է քարոզչութիւն, սուտ ու կեղծիք եւ զրպարտութիւն: Մինչեւ ե՞րբ պէտք է այս շարունակուի:

- Մենք էլ եկել ենք այստեղ որ ճշմարտութիւնը պարզուի: Մի հարեւան երկրի Գալապահ, օրինակի համար, Ըշբիգընի ասաց, »Նրանք շատ են ցանկանում պոմպ պատրաստել, արդեօ՞ք ճշմարտութիւն է ՚՞:

- Տեսէք խօսակցել ձեզ եւ Եւրոպական պետութիւնների հետ մի տարբեր մակարդակի եւ աւելի բարձրի վրայ է: Եթէ մի քանի երկիր իրենց ցանկութիւնների համար ճնշման տակ դնեն ամբողջ մնացածին, մենք դա խտրականութիւն եւ անհաստատ իրաւակարգ ենք համարում: 139 երկիր համաշխարհային ատոմական էներգիայի հաստատութեան (Աժանսի) անդամ են Վիեննայում, մենք էլ ենք: Թէ հաստատութեան (Աժանսի) կանոնագրութիւնը, թէ ընդգծւած ատոմային աշխարհակրօման զէնքի գործածման պայմանագիրը թէ բոլոր ապահովութեան պայմանագրերը, թէ բոլոր անդամների իրաւունք-

ների մասին՝ օգտուելու ատոմական ուժից խաղաղ նպատակների համար՝ բոլորը, բոլորը պաշտօնապէս ճանաչուած է: Այս բոլոր ազգերի ժողովուրդների օրինական իրաւունքն է: Աւելին, այս Ատոմական էներգիայի միջազգային Աժանսը ստեղծուել է, երկրներին ատոմական պոմպի գինաթափման համար: Հիմա տեսէք ինչ է կատարւում: Իրան ամենալաւ համագործակցութիւնն է ունեցել Աժանսի հետ, երկու հազարից աւելի քննիչներին ընդունել ենք մեր պատկան՝ կառուցներում: Քննիչները աւելի քան 1000 էջ մեզանից փաստաթղթեր վերցրին: Նրանց պատկերահանման պարագաները մեր ատոմական կեդրոններում տեղակայուած են, ներկայ բոլոր գեղարվեստներում հաստատուել է թէ ոչ մի անօրէն բան չի նկատուել: Այս խնդրի մի կողմն է:

- Այսպէս որ դուք էք ասում Աժանսը խնդիրը չի տեսնում:

- Խնդրի միւս կողմը այս է՝ կան երկրներ որ ատոմական էներգիա ունեն եւ թէ ատոմական զէնք: Նրանք իրենց ատոմական զէնքով ուրիշ երկրներին սպառնում են: Հիմա հենց այդ երկրներն են ասում է երկմիտ են, մի գուցէ Իրանը խաղաղ օգտագործումից չեղումներ կատարի: Մենք ասում ենք եթէ սրանք երկմիտ են կարող են մեր վրայ վերահսկողութիւն ունենալ: Այնուամենայնիւ «հզօրները» ասում են Իրանը իրաւունք չունի էներգետիկ օգտագործումը կատարելու պէտք չէ որ խաղաղ օգտագործումի սահմաններից դուրս գայ: Այս հզօր երկրները իրաւունք չունեն մեզ հետ այսպէս վարուելու այս ձեւը արդարացի է եւ չի կարող շարունակուել:

- Պրն. Գալապահ բայց որոշիչ հարցը այս է՝ եթէ աւելի շատ երկիրներ ատոմական ուժի վերածուեն, Իրանի նման երկիր, որ անվերջ իր ղեկավարը սպառնում է մի ամբողջ աշխարհամաս, յանկարծ պոմպ պատրաստի, աշխարհը որքա՞ն ստոյգ վտանգի մէջ կը լինի:

- Մենք արդէն իսկ ատոմական գինագործարան հիմնելու հետ սկզբունքորէն հակառակ ենք: Այդ պատճառով մի չէզոք կազմակերպութեան հիմնադրումը մենք առաջարկեցինք որ ատոմական ռազմական ուժերը գինաթափ անի: Մենք քաղաքակիրթ եւ մշակույթ ունեցող երկիր ենք եւ պատմութիւնը ցոյց է տուել որ երբեք ուրիշների դէմ նախաշարժակ չենք եղել:

- Այսինքն Իրանի իր սարքելիք պոմպի կարիքը երբեք չի՞ ունենալու:

- Շատ հետաքրքիր է Եւրոպական երկիրները ժամանակին ցանկանում էին բռնակալ թագաւորին ատոմային հնարաւորութիւն տալ: Այն վարչակարգը վտանգաւոր էր բայց դուք պատրաստ էիք նրան այդ հնարաւորութիւնը արտածել, իսկ երբ իսլամական հանրապետութիւն գոյութիւն ունի, մեծ պետութիւնները հակառակ են: Ես մի անգամ եւս հաստատում եմ մենք ատոմական զէնքի կարիք չունենք: Մենք ազնիւ եւ օրինաւոր գործ ենք անում: Մեր խօսքի վրայ էլ հաստատակամ ենք: Մենք նենգութիւն չենք անում: Մենք միայն մեր օրինական իրաւունքներն ենք ուզում: Բացի դրանից մենք ոչ ոքու հանդէպ

սպառնալիք չունենք: Այս էլ ձեր քարոզչական մեքենան է որ ընդդէմ ինձ է աշխատում:

- Արդեօ՞ք չի կարելի այնպէս վարուել որ ոչ ոք մտաւոք չլինի այն բանից որ դուք ատոմային զենք սարքելով Իսրայէլի դէմ գործածէք եւ համաշխարհային պատերազմի պատճառ դառնաք: Պրն. Գալապահ դուք ասած էք պայթուցիկ տարայի վրայ:

- Իրաւունք տուէք երկու բան ասել, ոչ մի ժողովուրդ այս աշխարհում մեզանից չի վախենում: Ոչ ոք էլ իրաւունք չունի ժողովուրդներին վախեցնի: Մենք համոզուած ենք եթէ Ամերիկան եւ մի քանի Եւրոպական երկրներ միջամտութիւն չանեն, հարեւան երկիրները իրար հետ խաղաղ եւ բարեացակամ կ'ապրեն, ինչպէս հազարաւոր տարիներ սրանից առաջ: 1980ին Սատամ Հուսէյնին էլ Եւրոպան եւ Ամերիկան հրահրեցին որ մեր դէմ պատերազմի: Պաղեստինի հանդէպ եւս մեր տեսակէտը պարզ է: Մենք ասում ենք իրաւունք տուէք այդ երկրի տէրերն էլ իրենց տեսակէտը յայտնեն, թողէք նրանք՝ քրիստոնեայ, մահմետական եւ հրեաները իրենց գաղափարը ասեն: Նրանք որ հակառակ են, պատերազմը գերազատելով երկրամասը կը վտանգեն: Ինչո՞ւ Ամերիկան եւ մի քանի Եւրոպական երկիրներ այս առաջարկի հետ հակառակ են: Իմ կարծիքով ովքեր Հոլոքոստի հետագոտողներին բանտարկում են՝ պատերազմ հրահրող եւ խաղաղութեան հակառակ են: Մեր տեսակէտը դեմոկրատականութիւն եւ բարեացակամութիւն է:

- Պաղեստինցիները վաղուց ձեզանից քանի քայլ առաջ են: Նրանք գոնէ Իսրայէլը որպէս իրականութիւն ընդունում են: Իսկ դուք ուզում էք աշխարհի քարտէզի վրայից վերացնէք: Պաղեստինցիները երկու երկրների միջեւ ստեղծած բնուկի լուծմանը պատրաստակամութիւն են ցուցաբերում: Մինչդեռ դուք Իսրայէլի գոյութեան իրաւունքը պաշտօնապէս չէք ճանաչում:

- Դուք սխալուած էք, դուք տեսաք մարդիկ Պաղեստինում ազատ ընտրութեան ժամանակ Համասին ձայն տուին: Մենք ասում ենք՝ ոչ ոք եւ ոչ մենք չպէտք է Պաղեստինի ժողովրդի կողմից խօսենք. նրանք պէտք է ասեն ինչ են ուզում: Եւրոպայում սովորույթ է որ ամէն ինչի համար ռեֆրանդում են անում, պէտք է Պաղեստինին էլ աւելի տրուի արտայայտելու իր կարծիքը:

- Պաղեստինցիները իրաւունք ունեն ունենալ իրենց երկիրը: Բայց

մեր կարծիքով Իսրայէլն էլ նոյն իրաւունքն ունի:

- Իսրայէլացիները որտեղի՞ց են եկել:

- Գիտեք եթէ պէտք լինի ինկատի ունենալ որ մարդիկ որտեղից են եկել, այդ դէպքում եւրոպացիներն էլ պետք Արեւելեան Ափրիկէ գնան, որովհետեւ համարեա մարդկութիւնը այդտեղից են եկել:

- Մենք եւրոպացիների մասին չենք խօսում, պաղեստինցիների մասին ենք զրուցում: Պաղեստինցիները աշխարհի Պաղեստինում էին հիմա նրանց հինգ միլիոնը թափառական է, նրանք ապրելու իրաւունք չունեն:

- Պրն. Գալապահ, երբեք այն օրը չի հասնի՞, երբ ասենք հենց այս է որ կայ եւ մենք պէտք է ներկայ վիճակի հետ հաշտուենք: Իրաքի պատերազմից յետոյ Իրանը լաւ իրավիճակի մէջ է: Ամերիկան իրականութեան մէջ Իրաքի պատերազմում պարտուել է: Արդեօ՞ք ժամանակը չէ, որ Իրանը դառնայ խաղաղ դրական մեծ ուժ Միջին Արեւելքում: Այս այն իմաստն ունի որ Իրանը պէտք է իրաւունքի ատոմային ծրագրերից եւ իրաւորող լոզունգներից:

- Շատ եմ զարմանում դուք ընդունելով Եւրոպայի քաղաքակաւութիւնը եւ այդպիսի յամառութեամբ պաշտպանում էք քայն: Դուք մի մամուլ էք ոչ թէ մի պետութիւն: Այդ որ ասում էք աշխարհը ինչպէս որ կայ ընդունել այսինքն երկրորդ համաշխարհային պատերազմին ովքեր որ չարթել են, հազար տարի մնան չարթական ուժ, իսկ գերմանացի ժողովուրդը հազար տարի մնայ անարգանքի տակ: Կարծում էք այս տրամաբանութիւնը ճիշտ է:

- Ոչ այս տրամաբանական չէ, եւ միեւնոյն ժամանակ ոչ ճշմարտութիւն: Գերմանացիները պատերազմից յետոյ շատ զուսպ եւ կարեւոր դեր ունեցան: Նրանք 1945ից, էլ անարգուած չեն: Ընդհակառակը մենք շատ ինքնաճանաչում ունենք: Բայց հիմա ուզում ենք Իրանի այսօրուայ պարտակաւութիւնների մասին խօսել:

- Այսինքն ընդունենք որ ամէն օր պաղեստինցիները սպանուեն կամ տերորիստական գործողութիւններում սպանուեն եւ տնաքանդ լինեն: Բայց թոյլ տուէք Իրաքի մասին ասել: Մենք ճիշդ այս երկրամասի խաղաղութեան եւ ապահովութեան կողմնակից ենք: Արեւմտեան երկիրները ուժ տարի Սատտամին գինեցին մեր դէմ՝ քիմիական զէնքեր տրամադրեցին եւ քաղաքական տեսակէտից նրան պաշտպան հան-

Շարք էջ 19

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year) * \$50,00 for USA
 * \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.
 * \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----
 Address: -----
 City: ----- State:----- Zip Code:-----
 Country: -----
 Tel :----- Fax : -----

ԲԵՍԱՊԻ ՆԵՐՂԱՂԹԻ 60-ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻ, 1947 ՍԵՐ ԵՒ ՇԱՅՐԵՆԻՔ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊԱՃԱՔԻԱՆ

Քսանհինգ տարեկան ամուրի երիտասարդ մըն էի: Ապագայի հանդէպ մտահոգ էի, որոշեցի ընտանիք կազմել: Նշանուեցայ մեզի հայրենակից քեսապցի օրդ. Հայկանուշին հետ: Նպատակս էր ապագայի ընտանեկան օճախս ամուրի հիմքերու վրայ հաստատել: Վրայ հասաւ ներգաղթը, հազարաւոր մարդիկ կը դիմէին ներգաղթի կոմիտէին արձանագրուելու համար: Մենք ալ մեր կարգին արձանագրուեցանք: Աշխատանքները կը կատարուէին, կը տիրէ եռուզեռ, իրարանցում, ուրախութիւն... 1947 թուականն էր:

Օր մը նշանածս եկաւ քովս ու վիզս փաթթուելով յայտնեց, թէ իրենց ընտանիքին կարմիր քարթը ելած էր: Շուտով էիք: Ուրախանալ թէ տիրիլ, շուտով էիք: Քսանգի մեր կարմիր քարթը չէր ելած: Յոյսով էինք, թէ ամէնքս ալ պիտի երթայինք հերթով, հոգ չէ, թէ քանի մը ամիս ետք, աւելի ամուրի հիմքերու վրայ հաստատուելու համար մեր ընտանեկան բոյնը, հայրենիքի սուրբ հողին վրայ: Ամէն օր կ'երթային ներգաղթի կոմիտէ, դուռը զարնելով ներս կը մտնէի: Ու՛ Պրն. Տեւեճեան, ձերեճեան՝ ի՞նչ եղաւ մեր թուղթը, կ'աղաչեմ իրարմէ մի բաժնէք մեզ...: Պատասխանը հերթով:

Եկաւ Հայկանուշին հերթը: Կը մեկնէին ընտանեօք: Կը պասսէին նաւուն ժամանման: Մեր հարցը սակայն կը մնար անորոշ: Պէյրուսի նաւահանգիստն ենք, հարիւր-հազարաւոր ժողովուրդ: Եռուզեռ, ուրախութեան կանչեր, երգեր: Ներգաղթողները հետզհետէ կը խմբուէին քարնաթիւնայի ծովեզերքը: Հ.Մ.Մ.ի ֆանֆարոնը իր հայրենասիրական երգերով կը խրախուսէր ու կը քաջալերէր խմբուած ժողովուրդը եւ աւելի փայլ կու տար ողջերթին:

«Կոչնակ հնչեցուր,
հնչեցուր ահեղ,
Թող հայ ոտք
Ելլէ ծագէ միմչ ծագ...»:

«Յնչակեան Ենք մենք,
Ուխտեալ զիճուորներ»:

Իսկ քիչ անդին «Արարատ»ի նշանաւոր ցրիչ եղիան, մասնակցելով ոգեւորութեան, կը պոռար. «Արարատ-Արարատ լուրերը առատ-առատ»: Վերջապէս եկաւ «Պոպետա»ն եւ յաղթական մուտք գործեց Պէյրուսի նաւահանգիստը: «Պոպետա»ն գերմանական նաւ էր, սակայն ան հիմա մերն էր...: Գերմանական կ'ուզէր աշխարհի վրայ ձգել միայն մէկ հայ եւ այն ալ թանգարանի մէջ դրուելու համար...: Սակայն հիմա հազարաւոր հայեր կ'երթային Հայաստան իրենց իսկ նաւով: Ժողովուրդը սկսած էր արդէն նաւ բարձրանալ: «Յաջորդ քարաւանին կը սպասենք ձեզի, մի մոռնար նամակ գրելու»: Ես կորսնցուցած, շուտով վիճակ մը կը պարզէի, խօսելու ընդունակութիւնս կորսնցուցած: Բերանս կը բացուէր, սակայն լեզուս կը դաւաճանէր: Եկաւ բաժանումի պահը, գրկախառնում, տաք համբույրներ, արցունքներ... եւ...: «Հայկանուշ նամակ գրէ, ինձի չի մոռնաս, հա»:

Արցունքները կը հոսէին մեր երկուքին աչքերէն: Հայկանուշս գրպանէն հանեց մետաքսեայ փոքր թաշկինակ մը, որուն վրայ ասեղնագործուած «Սուվրնի» (յիշատակ) բառը կը կարդացուէր եւ սրբելով

մեր երկուքին աչքեր, ինձ երկարելով գաջն ըսաւ. «Ասիկա քովդ պահէ ինձմէ քեզի յիշատակ: «Մենք չենք ուշանար. յաջորդ քարաւանով անպայման կու գանք»:

Նաւատիրները սկսան քակել պարանները, հսկայ նաւը շարժուեցաւ. ցնցուեցաւ հողիս: Նաւուն վրայէն հազարաւոր թաշկինակներ սկսան շարժիլ: Յանկարծ թնդած մթնոլորտը ու նաւուն վրայէն լուեցաւ Հայաստանի հիմնը.

«Սովետական ազատ աշխարհի Պայաստան, Բագում դարեր, Դաժան ճամբայ դու անցար, Քաջ նախնիք մեր Մաքառեցան քեզ համար, Որ դուն դառնաս Մայր Յայրենիք հայրութեան»:

Անոր միացան քարափ գոնուող ժողովուրդի երգի ձայները: Ալիքները կը բերէին վերջին հնչիւնները.

«Այ քարաւան ջան քարաւան Բշիք քո ճամբան դէպի Պայաստան»:

Իսկ մենք մնացողներս, փշրուած հողիով սպասելով մեր հերթին, վերադարձանք տուն: Անցան տարիներ...: Հայկանուշին հետ մեր սկսած ընտանեկան բոյնի կառուցումը լճացաւ, քանդուեցաւ, որովհետեւ ոչ մէկ յոյս կար ներգաղթի շարունակման: Ոչ մէկ լուր կամ նամակ Հայկանուշէն: Անցան տարիներ...:

Երբ այլեւս բոլորվին յոյս կտրեցի թէ Հայկանուշն եւ թէ մօտալուտ ներգաղթէն, դիմեցի ուրիշ բախտի: Ամուսնացանք, ընտանիքի տէր եղանք, ունեցանք զաւակներ: Առաջնեկ դուստրս կոչեցի Հայկանուշ, ի յիշատակ իմ առաջին սիրոյ: Իւրաքանչիւր անգամ իր անունը կանչելուս, կը գուարձանար հողիս: Տիրկինս դիտնալով իմ առաջին սիրոյ պատմութիւնը, բնաւ չէր մեղադրեր զիս: Անցան տարիներ...: Օր մըն ալ լսեցի, թէ երբեմնի նշանածս՝ Հայկանուշը, արդէն իսկ ամուսնացած ու զաւակներու տէր եղած, Պէյրուսի պիտի գայ: Պէտք էր անպայման օդակայան երթալ զինք դիմաւորելու: Աղջկանս՝ Հայկանուշին հետ, ձեռքերնիս ծաղիկ օդակայան գացինք դիմաւորելու մօրաքոյրը: Անհամբեր կը սպասէինք օդանաւին գալուն: Ինքզինքս շատ անհանգիստ կը զգայի, սիրտս պիտի պայթէր կարծես: Հիւանդ էի: Աղջիկս նկատեց ու հարցուց. «Ի՞նչ ունիս հայրիկ, անհանգիստ ես...»: «Ձէ զաւակս, բան չկայ, կ'անցնի...»: Օղանաւը յաջող վայրէջք կատարեց: Ճամբորդները սկսան իջնել հերթով: Վերջապէս երեւցաւ Հայկանուշս, երիտասարդ մը թեւէն բռնած, արդէն երիտասարդութեան թարմութիւնը կորսնցուցած, միջին տարիքով կին մը: Սակայն հակառակ տարիներու գործած աւերին, Հայկանուշս ինձի համար կը մնար միշտ երիտասարդ, միշտ ցանկալի...: Վերջապէս ուղեւորները դուրս եկան օդակայանէն: Մեր նայուածքները հանդիպեցան իրարու...: Բարեկեցինք գիրար: «Վստահ էի, թէ անպայման կու գաս մեզի դիմաւորելու»: Հերթը հասաւ ծանօթացնելու մեր զաւակները: Այս իմ մեծ աղջիկս է՝ Հայկանուշը: - Իսկ այս ալ իմ մեծ տղաս է՝ Յովիկը (Յովհաննէս): Ուրախութեան արցունքները սկսան հոսիլ մեր աչքերէն մեր զաւակներուն զարմացական ու հիացական ակնարկներուն տակ: Գրպանէս հանեցի յիշատակ թաշկինակը, զոր հաւատարմութեամբ պահած էի

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՇԱՐԺՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ

Շարունակուած էջ 13-էն

կեանքը կազմակերպող, հայութիւնը միացնող ու ներշնչող ոյժը: Թագաւորութիւնը վերացուած էր: Բանակի մեկուսացումը անարդիւնք եղաւ եկեղեցու գործօն ներկայութեամբ: Անհրաժեշտ էր վերացնել եկեղեցին ազգի ու ծագման ծրագիրը իրականացնելու համար: Դենշապուհը հայերին ներկայացրեց կրօնափոխ լինելու վերջնագիրը: Այդ փաստաթուղթը երկու կողմ ունէր՝ կրօնազիտական-աստուածաբանական եւ քաղաքական: Առաջինով Սասանեանները փորձ էին անում «տրամաբանական փաստարկներով» եւ «աստուածաբանական վերլուծելով» թուլացնել կամ հերքել քրիստոնեաների հաւատը, նրանց նուիրումը Քրիստոսին ու Նրա եկեղեցուն: Երկրորդով նրանք պնդում էին, որ որպէս հպատակներ հայերն ու միւսները պարտաւոր են ընդունել այն կրօնը, որ իրենց արքան է ընդունում եւ պաշտել այն աստծուն, որ իրենց թագաւորն է պաշտում: Այլապէս ինչպէս հայերը, այնպէս էլ միւս ժողովուրդներ օրինազանց, յանցաւոր ու դաւաճան կը նկատուեն: Միհրանբեհ հայերի առաջ երկու հարաւորութիւն դրեց, կամ կէտ առ կէտ պատասխանել իր նամակին եւ կամ էլ ներկայանալ պարսկական արքունական Մեծ Ատեանի առաջ, որի վճիռը լինելու էր կամ մահ կամ բանտարկութիւն:

Տեղի ունեցաւ այն, ինչ Սասանեան պալատը չէր ակնկալում: Ենթարկելու, վախացնելու, ստորացնելու, խեղճացնելու, ստրկացնելու եւ ընկերութիւնը բաժանբաժան անելու համար ձեռնարկ-

ուած սասանեանների միջոցառումները իրենց նախահօր՝ Հայկ Նահապետից ժառանգուած ազատատենչութեան, քաջութեան ու անվախութեան տրամաբանութեան ենթարկուելով հայերի մօտ վերածուեցին ապրտամբուութեան բուռնցքի, պայքարի ոգու եւ ազգային միասնութեան: Հայերը համարձակ կերպով քննադատեցին Սասանեանների հակաքրիստոնեական թեզերը եւ շեշտեցին, որ իրենք ոչ մի դէպքում չեն հրաժարուի Քրիստոսից ու Նրա եկեղեցուց, որ Շահին Շահը կարող է իշխել միայն իրենց մարմնի, ունեցուածքի, քաղաքական կեանքի, բայց ոչ մի դէպքում իրենց հոգու, խղճի, հաւատի վրայ: Հայերը իրենց գրաւոր պատասխանում, Արտաշատի ժողովում, արձանագրեցին. «Այս հաւատից մեզ ոչ ոք չի կարող խախտել, ո՛չ հրեշտակները եւ ո՛չ մարդիկ, ո՛չ սուրբ եւ ո՛չ հուրը, ո՛չ ջուրը եւ ո՛չ էլ որեւէ այլ դառն հարուած: Մեր ամբողջ գոյքն ու ստացուածքը քո ձեռքումն են, եւ մեր մարմինները քո առաջ են. քո կամքի համաձայն արա, ինչ ուզում ես»: Հայերը այդ հողի վրայ կազմեցին միասնութիւն: Նոյնիսկ այն նախարարներին, որոնք դիմելով չէզոք ընդդիմութեան հեռացել էին երկրից ու որոշել էին Աստծուն պաշտել օտարութեան մէջ, ետ բերեցին Մարգարան Վասակ Սիւնիի դեկլարութեամբ: Չէզոք ընդդիմութեան էր դիմել նաեւ Վարդան Մամիկոնեանը:

Այս փուլը մարմնաւորեց Վարդանանց անդրանիկ ու կարեւոր յաղթանակը:

(Շարունակելի-1)

քսանհինգ տարի եւ գաջն Հայկանուշին երկարելով ըսի. «Քառորդ դար ես պահեցի զայն, հիմա կարգը քուկդ է. դուն ալ քառորդ դար պահէ...»: Քառորդ դարուայ արցունքին խոնաւութեան հետքերը տակաւին թաշկինակին վրայ էին...: Սէր: Հայրենիքը բաժնեց մեզ, այո, բայց մեր սէրը հայրենիքին հանդէպ կրկնապատկեցաւ, որովհետեւ հազարաւոր Հայկանուշներ իրենց ընտանեկան օճախը շինցուցած էին հայրենիքի հովանիին տակ, հեռու

ամէն ձեւի վտանգներէն, իրենց զաւակները կը մեծնային որպէս հայ, իսկ մեզի մնացողներուս, ամէն վայրկեան կը սպառնայ ձուլումը: Մենք, ես ու Հայկանուշը երբեք չզղջացինք ու չմեղադրեցինք զիրար, որովհետեւ հայրենիքի սէրն էր, որ բաժնեց մեզ իրարմէ: Մենք հայրենիքին համար պատրաստ ենք նոյնիսկ մեր կեանքը տալու: Աշխարհ լեցուն է սիրային նմանօրինակ պատմութիւններով: Այս մէկն ալ մերը: Կը սպասենք հերթին...:

ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍԻ ԻՐԱՆԱՀԱՅ ՄԻՈՒԹԻՒՆ
ARMENIAN SOCIETY OF LOS ANGELES
Նախաձեռնութեամբ Գրականութեան եւ Արուեստի Բաժանմունքի

ԳՐՔԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍ
Նուիրուած Պատմաբան Յովիկ Ներսիսեանի գրքին՝
«Հայկական Լեռնաշխարհը ըստ Զրադաշտն ու իր Աւետան»

Գիրքը կը ներկայացնի Դոկտ. Հրաչ Վարդանեան Սրտի խօսք՝ Ներսէս Տ. Մեսրոպեան

Կիրակի, Սեպտեմբեր 17, 2006
Երեկոցեան ժամը 6:30ին
Իրանահայ Միութեան Կենտրոնատեղիում
320 W. Wilson Ave. Glendale, CA
Հանդիսութեան աւարտին՝ Հիւրասիրութիւն

Մուտքը ազատ

ԱՆՊԱՍ ՍԸ ԵՄ «ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔ» ՕՐՇՆԵՐԳԻ ՄԱՍԻՆ

Շարունակում է 7-ԷՋ

Իսկ երրորդ էջով տրուած է «Մեր Հայրենիք»-ին ձայնագրութիւնը տառադարձուած բառերով:

Հանրագիտարանի ներածականի շնորհակալութեան խօսքէն կ'իմանանք որ, գրքի նիւթերուն մեծ մասը հաւաքուած է դեսպանատուներէն եւ հիւպատոսարաններէ:

Բ. օրինակ.
W. L. Reed-ի եւ M. J. Bristoco-

տարուան վերջը: Այս նպատակով արդէն մրցում մը յայտարարուած է որ ընթացքի մէջ է: Մրցումին մասնակցողներ, մինչեւ Օգոստոսի 1ը պէտք է իրենց գործերը յանձնած ըլլային այս առիթով կազմուած 22 հոգիներէ բաղկացած յատուկ յանձնախումբին: Այժմ, մրցումը արդէն իսկ մտած է իր երկրորդ փուլին մէջ: Թէ է՞րբ արդիւնքները պիտի յայտարարուին՝ տակաւին չենք գիտեր:

Մեր Հայրենիք
Mer Hayrenik
(Our Fatherland)

Lyrics: Mikael Ghazari Nalbandian (1829-1866). Music: Barsegh Kanachyan (1885-1967). Adopted: 1991.

Historical Background
The words to the anthem were written by the famous Armenian poet and patriot Mikael Ghazan Nalbandian. The present anthem, adopted 1 July 1991, is a modified version of the original song, which consisted of five clauses. Some of the words have also been changed appropriately to reflect the freedom and independence of the country.

Armenian Words	Armenian Words (Transliteration)	English Translation
1 Մեր Հայրենիք ազաւ, անկախ, Մը արեւիկ, դարեպար, Իր որպիսի արյ կանամ է Ազաւ, անկախ Հայաստան (repeat previous two lines)	1 Mer Hayrenik, azad angakh, Vor abrel eh tureh tar Ir vor tika art yanchoom eh Azad, angakh hanastan (repeat previous two lines)	1 Our fatherland, free and independent, That lived from century to century His children are calling Free independent Armenia (repeat previous two lines)

Ի կողմէ խմբագրուած «National Anthems of the World»-ի 9րդ հատորին մէջ եւս Հայաստանի Օրհներգի ձայնագրութեան գլխուն գրուած է «Music by Barsegh Kanachyan (1885-1967):

Այստեղ չեմ չիշեր հայկական տպագրութիւնները կամ հրատարակութիւնները:

Ասիկա, պատասխանատուութեան եւ ծանօթութեան պակասի արդիւնք է: Այս երեւոյթը մտահոգիչ է:

Այժմ, նման երեւոյթ մը պարզող ուրիշ օրինակ մը բերեմ: Սակայն, նախ պատրաստեմ ընթերցողը:

Ինչպէս բոլորիս ծանօթ է, Հայաստանի Սահմանադրութեան փոփոխութեան տրամադրութեան համաձայն, հայրենիքը նոր օրհներգ մը որդեգրելու առիթ ունի մինչեւ այս

Ուրեմն, նոր Օրհներգի մը յորինման առիթ, շատ բնական ըլլալով, թեր ու դէմ կարծիքներու յորձանք մը ստեղծուած է, յատկապէս Հայաստանի մէջ:

Այսքան ըսելէ յետոյ, խոստացած օրինակ տամ:

Պրն. Դաւիթ Յովհաննէս, գրող եւ Խորհրդարանի նախկին անդամ, այս յորձանքին մէջ, ինք եւս իր ձայնը բարձրացնելով նոր Օրհներգի մը մասին խօսելու ժամանակը ճիշդ գտնելով եւ Սովետական Հայաստանի հիմնը ետ բերելու մասին իր բացասական կարծիքը յայտնելէ ետք, կ'առաջարկէ որդեգրել 19րդ դարու երգերէն «Կոմիտասի յորինած «Հայաստան»ը, (Armenia Now.com, June 2, 2006): Այստեղ եւս կը տեսնենք նոյն տիւրու պատմութիւնը: Կոմիտաս վարդապետ չէ յորինած «Յովհաննէս միրզա վա-

նանդեցի (1772-1841) խօսքերով «Հայաստան» երգը. ան միայն մշակած է զայն: Վանանդեցի «Առ Հայաստան» քերթուածը, իր վայելած ժողովրդականութեան համար, երգի վերածեց բանաստեղծութեան առաջին տողի, առաջին բառին՝ «Հայաստան» անունով Գաբրիէլ Երանեան (1827-1862):

Կոմիտաս վարդապետ, վարդան Սարգսեան եւ հաւանաբար ուրիշներ միայն մշակած են զայն: Այս պարագային կարող ենք ըսելով թէ՛ ինչո՞ւ մեղադրել Պրն. Դաւիթ Յովհաննէսը, երբ ծանօթութեանց մեր ամենահեղինակաւոր աղբիւրին՝ «Հայկական Սովետական Հանրագիտարան»ի հատոր 11ի, էջ 269ի առաջին սիւնակին վրայ կը կարդանք.

«Վանանդեցու բանաստեղծութիւններից յայտնի է «Առ Հայաստան»ը (առաւելապէս իր առաջին տողով՝ «Հայաստան, երկիր դրախտավայր»), որ երգի է վերածել Կոմիտասը»:

Այս երգի կապակցութեամբ ծանօթութեան սա կէտը եւս աւելցնեմ:

Կոմիտաս վարդապետի մշակած «Հայաստան» երգի առաջին հրատարակութիւնը եղած է 1920ին Կ. Պոլսի հրատարակուած ՀԱՅ ԳՈՒՍԱՆ, Առաջին Շարք, Գ. հատորին մէջ, որուն ձայնագրութեան գլուխը թէ՛ մեծատառ գրուած է միայն Կոմիտաս վարդապետ, սակայն հատորի վերջաւորութեան գետեղուած բովանդակութեան ցանկին վրայ գրուած է. «Հայաստան»ը դաշնաւորեց Կոմիտաս վարդապետ»:

Դաշնակցութիւնը համաձայն չէ «Մեր Հայրենիք»ի փոփոխութեան:

Ահա թէ ինչ կը կարդանք Հինգշաբթի, Օգոստոս 5, 2006ի «Armenianliberty» համացանցային լուրին վրայ.

Dashnaks opposed to Armenian Anthem change.

Ghegam Manukian, a parliament deputy from Dashnaksutyun, said the party, which is represented in the government, will likely draft a separate bill that would uphold the status of "Mer Hayrenik." "We hope it will pass", he told RFE/RL. "Since there are no, or almost no, music composers in parliament, the vote will be

more impartial."»:

Ճիշդ է, որ Դաշնակցութիւնը անբաւարար լիարժէք կապուած է «Մեր Հայրենիք»-ին: Ովորհետեւ, երկրորդ Հանրապետութեան շրջանին ան շարունակած էր տէր կանգնիլ ազգային խորհրդանիշներուն (դրօշ, գինանշան եւ քայլերգ) մինչեւ Երրորդ Հանրապետութեան հաստատումով անոնց տուն վերադարձը:

Այժմ, որ առիթը ներկայացած է նոր ազգային Օրհներգ մը ունենալու, հակառակ անոր որ իտալական երաժշտութեամբ եւ բնագրային նիւթի բովանդակութեամբ «Մեր Հայրենիք»ի փոխանցած ոգիէն առաջնորդուած սերունդներ կերտեցին ազատ-անկախ Հայաստանը, ատով հանդերձ, սակայն, վստահ եմ, բոլորս կը լսենք մեր խղճի ամենախորրէն եկող այն մեղմագոյն ձայնը, որ միշտ կը լիշեցնէ մեզի՝ մեր Օրհներգին իտալական երգ ըլլալը:

Ես որ փոքր տարիքէս ի վեր մեծ խանդավառութեամբ եւ յուզումով երգած եմ, կ'երգեմ եւ պիտի երգեմ, չեմ կրցած անտեսել անոր իտալական ըլլալու իրողութիւնը:

Եթէ երբեք համոզուինք պատմական այն իրողութեան թէ՛ «Մեր Հայրենիք»-ին, եթէ կ'ուզէք, նիւթէն անկախ եղանակը առիթ իտալացիներէն, քանի որ մենք այդ շրջանին պատրաստուած երաժիշտներու պակասը ունէինք, եւ չունէինք պատշաճ երգերու պաշար, որով ստիպուած էինք որոշ չափով օտար երգերով անանիլ:

«Մեր Հայրենիք»ը Միքայէլ Նալբանդեանի նպատակը լաւագոյնս արդարացուց: Ան, իր պարտականութիւնը լի ու լի կատարեց:

Այժմ, որ առիթը ներկայացած է նոր Օրհներգ ունենալու եւ մանաւանդ որ, ունինք հասուն մտաւորականներ, աւարտուն (accomplished) ստեղծագործող երաժիշտներ, ոչ միայն անհեթեթութիւն պիտի ըլլայ պահել իտալականը, այլ՝ նուստացում մեր մտաւորականներուն ու անարգանք մեր ստեղծագործող երաժիշտներուն:

Պէտք է զգացականութեան համար հայկականութիւնը զոհել:

Ժամանակը հասած է ունենալու ՀԱՅԱՍՏԻՆ ԵՎ ՀԱՅԱՀՈՒՆՉ ՕՐՀՆԵՐԳ մը:



ART PHOTOGRAPHY
JACOB DEMIROJIAN
TEL(626)795-4493

«ԿԱՅԾ»
Երիտասարդական Նուագախումբը
Պէտք ունի
Յայերէն երգերու Ծանօթ
Երիտասարդ Երգիչ Կամ Երգչուհիի
Յետաքրքրուողները Կրնան
Յեռաձայնել Ռազմիկին՝ 818-590-2824

IMMIGRATION-Ի-ԶՄԻՅԻ
KARLIN & KARLIN, PROFESSIONAL LAW CORP.
Tel: (213) 365-1555 Fax: (213) 383-1166

Ձեր գաղթականական առկախ հարցերուն համար կապ պահեցէք մեր իրաւաբանական գրասենեակին հետ
Նախկին պետական քարտուղարութեան
Immigration-ի մասնագետ
ՊԵՏՐՈՍ ԱՆՍՐԵԱՆԸ
կ'օգնէ ձեր հարցերու լուծման
3701 Wilshire Blvd., Suite 1035, L.A., CA 90010

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ ■ ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION



Բեղմնաւոր Անցեալ, Լուսաշող Ապագայ:
Proud Past, Exciting Future.



A NEW ARMENIAN EDUCATIONAL INSTITUTION

AGBU PASADENA HIGH SCHOOL

TO MEET THE SCHOLASTIC, DEVELOPMENTAL AND SOCIAL NEEDS OF OUR YOUTH IN PASADENA, GLENDALE, BURBANK AND SURROUNDING COMMUNITIES IN THE SAN GABRIEL VALLEY

Affiliated with AGBU Manoogian-Demirdjian School, a College Preparatory High School Serving the Greater Los Angeles Armenian Community for 30 Years.

NEW STUDENTS ARE WELCOME DURING SEPTEMBER

- Enrollment open for students in Grades 9, 10 and 11 for the first year.
- First High School Graduating Senior Class in June 2008.
- Offering a challenging college preparatory academic program in a safe, caring and supportive environment.
- Armenian program to focus on the Armenian identity, culture, history and rich heritage of the Armenian people.
- Financial assistance available for qualified families.

SESSIONS STARTED AS OF
TUESDAY, SEPTEMBER 12, 2006

For further information and how to register your child, please call (626) 794-0363 or (818) 883-5379

AGBU High School - Pasadena
2495 E. Mountain Street, Pasadena, California 91104
www.agbuphs.org

AGBU IN ITS SECOND CENTURY.

A Centennial Symposium.

"Tribute to the Past - Pathways to the Future"

Presented by:
AGBU SOUTHERN CALIFORNIA DISTRICT COMMITTEE
In Cooperation with
USC INSTITUTE OF ARMENIAN STUDIES
Part of USC College of Letters, Arts & Sciences

SATURDAY, OCTOBER 28, 2006

9:30 AM – 3:30 PM
University of Southern California, Town and Gown
Figueroa and Exposition - Gate 3 Entrance
Los Angeles, CA

Overview of Global Activities of AGBU with a focus on United States and Armenia

- The Seminar will Address:
- Organizational Structure
 - Cultural and Educational Activities
 - Sports, Youth, and Young Professionals Programs
 - New Challenges and Opportunities
 - Constituency Development

Paper Presentations by:

DR. R. HRAIR DEKMEJIAN
(USC)

MS. RAMELA ABBAMONTIAN
(PhD Candidate, UCLA)

DR. MIHRAN AGBABIAN
(President Emeritus, American University of Armenia)

DR. HARUTYUN ALEXANYAN
(Armenian State Pedagogical University, Yerevan)

REV. FR. KTRIJ DEVEJIAN
(Mother See of Holy Etchmiadzin)

DR. MATTHEW JENDIAN
(CSU Fresno)

DR. SILVA KARAYAN
(California Lutheran University)

DR. ANI MOUGHAMIAN
(LA Unified School District)

DR. ANI YAZEDJIAN
(Texas State University)

Special Guest Speaker:

HON. PAUL R. IGNATIUS
Former

Secretary of the Navy - Under Secretary of the Army - Assistant Secretary of Defense

Complimentary breakfast, lunch and snacks will be served

Attendance is by reservation only – Seating is limited

Reservation Deadline: October 18, 2006

Please RSVP at: AGBU Alex Manoogian Center

(626) 794-7942 or seminar@agbuca.org

AGBU CENTENNIAL SPONSORS

Bank of Orange County is a full service bank prepared to meet the needs of both small and large businesses.		Contact: Gus Ghusayni Senior Vice President 411 N. Central Avenue Glendale, CA 91203 bankoforangecounty.com (818) 548-2720
BANK of ORANGE COUNTY	Commercial Real Estate	
	Term Loans and Lines	
MEMBER FDIC	Free Business Checking	
A Division of Placer Sierra Bank	High Rate Money Market	

6131 E. Telegraph Rd. • Commerce, CA 90040 • 323.721.2100 • 714.879.2100 • commercecasino.com	HOTELS & RESORTS

ՄԱՐԶԱԿԱՆ

ՐԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏՊՈՒԼԻ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԽՈՒՄԲԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Կարճատեւ ընդմիջումէ յետոյ, որ պայմանաւորուած էր ազգային եւ երիտասարդական հաւաքականներու մրցելու թիւերով, վերսկսաւ ֆուտպոլի բարձրագոյն խումբի առաջնութիւնը: 19-րդ շրջանը առանձնացաւ իր իւրօրինակութեամբ: Կայացած բոլոր չորս հանդիպումներն ալ աւարտեցան միեւնոյն՝ 4-1 հաշուով եւ այդ խաղերուն յաղթեցին մրցաշարային աղիւսակի առաջին չորս հորիզոնականները գլխաւորապէս ակումբները:



անընդմէջ յաղթանակն էր: Հայաստանի ախոյեան ֆիւնիկը հերթական յաղթանակը տօնեց 4-1 հաշուով «Ուլիսի» դէմ: Երկրի գաւաթակիր «Միկայ»-էն ալ առանձնակի ջանքեր չպահանջուեցան «Կիլիկիային» յաղթելու համար: Նոյնպէս «Բանանցն»ը հերթական 3 միաւորը վաստակեցաւ «Գանձասարի» հետ խաղի ընթացքին:

Իր յաղթարշաւը կը շարունակէ Երեւանի «Արարատը», որ 3րդ շրջանին պարզապէս հիանալի հանդէս եկաւ եւ առաջիկայ միաւոր չէ կորսնցուցած: Հերթական խաղը արարատցիներն կատարեցին Գիւմրիի մէջ, ուր մեծ հաշուով (4-1) պարտութեան մատնեցին շիրակցիներուն: Այդ արարատցիներու 5րդ

Մրցաշարային աղիւսակը

Table with 7 columns: Team, Խաղ (Games), Յաղ. (Wins), Չաւս. (Draws), Պարտ. (Losses), Կօլ (Goals), Միաւոր (Points). Lists teams like Փիւնիկ, Բանանց, Միկա, etc.

ՃԱՆՐԱՍԱՐՏԻ ԵՐՐՈՊԱՅԻ ՊԱՏԱՆԵԿԱՆ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ ՏԻԳՐԱՆ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԸ ԵՒ ՄԵԼԻՆԵ ԴԱԼԻՉԵԱՆԸ ՆՈՒԱՃԵՑԻՆ ԵՐՐՈՊԱՅԻ ԱՆՈՅԵԱՆԻ ՏԻՏՂՈՍԸ

Իտալիայի Պալերմօ քաղաքին մէջ կայացած ծանրամարտի Եւրոպայի պատանիներու 34րդ եւ աղջիկներին 9րդ առաջնութեանը, մրցահարթակ դուրս եկած հայ մարզիկներէն Տիգրան Մարտիրոսեանը (69 կգ, Գիւմրի) նուաճեց Եւրոպայի ախոյեանի տիտղոսը: Սեպտեմբեր 6ին գերազանց հանդէս եկած Մարտիրոսեանը պոկում եւ հրում վարժութիւններում արձանագրելով, համապատասխանաբար, 150 կգ. եւ 173 կգ. արդիւնքը՝ երկամարտին հաւաքեց 323 կգ. եւ գրաւեց առաջին տեղը:

պրոնգէ մետալ շահեցաւ հրում վարժութեան մէջ՝ ցոյց տալով 176 կգ. արդիւնք: Երկամարտի 321 կգ. (145+176) արդիւնքով Արամը գրաւեց 4-րդ տեղը: Ախոյեանի տիտղոսին արժանացաւ ռուսաստանցի Ալեքսէյ Եուֆիլինը՝ 340 կգ. (155+185):

Աղջիկներին առաջնութեան 63 կգ. քաշային կարգում գերազանց հանդէս եկաւ Մելինէ Դալիչեանը, որ գերազանցեց իր բոլոր մրցակիցներուն ու կանգնեց պատուոյ պատուանդանի վերին աստիճանին: Ան երկամարտի խաղին ցոյց տուաւ 222 կգ. (101+121) արդիւնք եւ արժանացաւ Եւրոպայի ախոյեանի ոսկէ մետալին: 75 կգ. քաշային կարգին Եւրոպայի առաջնութեան արծաթէ մետալը նուաճեց Հռիփսիմէ Խուրշուդեանը (Քասախ):

Մրցանակակիր դարձաւ նաեւ Թեհմինա Կարապետեանը: Մինչեւ 53 կգ. քաշային մարզուհիներին մրցումին՝ հայ մարզուհին երկամարտի 169 կգ (75+94) արդիւնքով դարձաւ պրոնգէ մրցանակակիր:

Արմէն Ղազարեանը (69 կգ., Սպիտակ) նուաճելով 3րդ հորիզոնականը վաստակեց պրոնգէ մետալ:

Մինչեւ 62 կգ. քաշային կարգի Դաւիթ Մուրատեանը երկամարտի 261 կգ. (120+141) արդիւնքով 5րդ տեղը գրաւեց: Քաշային աչս կարգին 280 կգ. (126+154) արդիւնքով ախոյեան հռչակուեցաւ Թուրք էրոլ Բիլկինը:

Մեր միւս ծանրորդը՝ Արամ Անդրիկեանը (մինչեւ 77 կգ.) փոքր

ԵՐՐՈՊԱԿԱՆ ՖՈՒՏՊՈՒԼ

ԱՆԳՆՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Անգլիոյ ֆութպոլի առաջնութեան չորրորդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները Մանչեսթըր Եուն. - Թոթենհամ 1-0 Շեֆիլտ Եուն. - Պլեքսըն Ռովըրզ 0 - 0 Ուեսթ Յամ - Ասթոն Վիլլա 1-1 Էվըրթըն - Լիվըրփուլ 3 - 0 Նիւքեմըր Եունայթըտ - Ֆուլհամ 1-2 Պոլըն Ուոնտըրըրզ - Ուաթֆորտ 1 - 0 Արսենալ - Միտլըզպորո 1 - 1 Փորթսմութ - Ուիկան Աթլեթիք 1 - 0 Չելսի - Չարլթըն Էթլեթիք 2 - 1 Ռիտինկ - Մանչեսթըր Սիթի



Table with 7 columns: Team, W, D, L, GF, GA, Pts. Lists teams like Մանչեսթըր Եունայթըտ, Փորթսմութ, Էվըրթըն, etc.

ՖՐԱՆՍԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Ֆրանսայի ֆութպոլի առաջնութեան հինգերորդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները Պորսօ - Նիս 3 - 2 Լանս - Վալանսիէ 3 - 0 Սըտան - Սէնթ Էթիէն 2 - 2 Րընէ - Սոչօ 2 - 1 Նանթ - Լիլ 1 - 1 Լիոն - Թրուա 2 - 0 Լը Մանս - Լորիան 1 - 1 Օքսէր - Մոնպօ 2 - 1 Թուլուզ - Նանսի 2 - 2 Փարիզ Սէն ժերմէն - Մարսէլ



Table with 7 columns: Team, W, D, L, GF, GA, Pts. Lists teams like Մարսէլ, Լիոն, Լիլ, etc.

ՍՊԱՆԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Սպանիայի ֆութպոլի առաջնութեան եկրորդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները Պարսելոնա - Օսասունա 3 - 0 Աթլեթիքօ Մատրիտ - Վալենսիա 0 - 1 Վիլզարտալ - Ռէքրեաթիօ Յուլվա 0 - 1 Մայորքա - Տեփորթիօ Քորունա 0 - 0 Լեվանթ - Ռէալ Մատրիտ 1 - 4 Ռէալ Պեթիս - Աթլեթիքօ Պիլլաօ 3 - 0 Կիմնասթիք - Սելթա Վիլո 1 - 2 Կեթաֆէ - Ռասինկ Սանթամարի 1 - 0 Ռէալ Սոսիէտատ - Սելիլլա 1 - 3 Սարակոսա - Էսփանիոլ 3 - 0



Table with 7 columns: Team, W, D, L, GF, GA, Pts. Lists teams like Սելիլլա, Պարսելոնա, Կեթաֆէ, etc.

ԻՏԱԼԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ


Իտալիայի ֆութպոլի առաջնութեան առաջին հանգրուանի մրցումներուն արդիւնքները Ա. Էս. Ռոմա - Լիվորնօ 2 - 0 Ֆիորենթինա - Ինթեր Միլան 2 - 3 Ա. Սէ. Միլան - Լացիօ 2 - 0 Աթալանթա - Ասքոլի 3 - 1 Քալիարի - Քաթանիա 0 - 1 Քիեո - Սիենա 1 - 2 Մեսինա - Ուտինտէ 1 - 0 Փալերմօ - Ռեճինա 4 - 3 Սամտորիա - Էմփոլի 1 - 2 Թորինօ - Փարմա 1 - 1



Table with 7 columns: Team, W, D, L, GF, GA, Pts. Lists teams like Ա. Էս. Ռոմա, Աթալանթա, Ինթեր Միլան, etc.

Advertisement for Jessica Demirdjian REALTOR® and Prudential California Realty. Includes contact information for San Diego, CA: 9878 Hibert Street, San Diego, CA 92131. Phone: 619 846-7738. Email: jessicad@prusd.com.

ՄԱՐԱԶԴ



ԲԻԻԶԱՆԴ ՍԱՊՈՒՆՃԵԱՆ
(1942 - 2006)

Սրտի դառն կակիծով կը գուժենք մեր սիրեցեալ ամուսնոյն, հօր, զաւակին, եղբօր եւ ազգականին՝ **ԲԻԻԶԱՆԴ ՍԱՊՈՒՆՃԵԱՆԻ** մահը որ պատահեցաւ Ուրբաթ 8 Սեպտեմբեր, 2006ին, կէսօրէ ետք ժամը 4:00ին, իր բնակարանին մէջ, յետ երկարատեւ հիւանդութեան:

Յուղարկաւորութիւնը տեղի պիտի ունենայ Ուրբաթ, 15 Սեպտեմբեր 2006ի առաւօտեան ժամը 10:30ին Hollywood Hills Forest Lawn գերեզմանատան Կարմիր եկեղեցւոյ մէջ, 6300 Forest Lawn Dr. L.A. CA.:

Յուղարկաւորութեան արարողութեան հոգեճաշ պիտի մատուցուի Ambrosia ճաշարանին մէջ, 6410 S. Fernando Dr. Glendale, CA:

Սգակիրներ՝ Այրին՝ Տիկ. Քէթի Սապունճեան Դուստրը՝ Տէր եւ Տիկ. Շանթ եւ Նաթալի Ֆարձօ եւ դուստրը Դուստրը՝ Սեւան Սապունճեան Մայրը՝ Տիկ. Վարդուհի Սապունճեան Եղբայրը՝ Տէր եւ Տիկ. Աւետիս եւ Լուսին Սապունճեան եւ որդին (Աւստրալիա)

Քոյրը՝ Տէր եւ Տիկ. Եղուարդ եւ Շաքէ Մարտիրոսեան եւ զաւակունք Քոյրը՝ Օր. Նորա Սապունճեան Տիկ. Անահիտ ձուլֆայեան եւ զաւակունք

Տէր եւ Տիկ. Գէորգ եւ Արփի Առաքելեան եւ զաւակունք Տէր եւ Տիկ. Պօղոս եւ Արմենուհի Կուրտիքեան եւ զաւակունք (Ավստրալիա)

Տիկ. Լիւսի ձէքըպ եւ զաւակունք (Չուիցերիա) Տիկ. Նուարդ Ուաչերեան եւ զաւակունք (Պէյրութ, Լիբանան) եւ համայն Սապունճեան, Առաքելեան, ձուլֆայեան, Հանտեան, Գալուստեան, Ապսէ, Կէցոյեան, ձուլֆայեան, Մարտիրոսեան, Պապուճեան, Պալճեան, Կուրտիքեան, Գուլումճեան, Տէրտէրեան եւ համայն ազգականները եւ բարեկամները:

ՈՉ ԵՄ Է «ԿԱՆՉ»Ի ԽՄԲԱԳԻՐ ՊԱՐՈՅՐ ԵՐԷՑԵԱՆ

Լիբանանի մէջ իր մահկանացուն կնքած է վաստակաշատ եւ հաւատարմ հասարակական գործիչ, լրագրող, հրապարակագիր եւ «Կանչ» շաբաթաթերթի պատասխանատու խմբագիր՝ **ՊԱՐՈՅՐ ԵՐԷՑԵԱՆ**:

«Մասիս» իր վշտակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի ընտանեկան բոլոր պարագաներուն:

ՅԱԲԱԿՅՈՒԹԻՒՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ԹՕՄՊՈՒԼԵԱՆԻ (Լիբանան) մահուան տխուր առթիւ Հ.Մ.Մ.ի վարչութիւնը եւ Հ.Մ.Մ. Տիկնանց Օժանդակ Մարմնի վարչութիւնը կը յայտնեն իրենց ցաւակցութիւնները ընտանեկան պարագաներուն ի մասնաւորի Vrej Pastyri Տէր եւ Տիկ. Վրէժ եւ Արմինէ Թօմպուլեաններուն:

Առ այդ \$100 կը նուիրեն «Մասիս»ին

ՏԽՐՈՒՆԻ

Ցաւով իմացանք 12 տարեկան ՎԱՐՈՒԺԱՆ ՔԻՊԱՐԵԱՆԻ մահը, որ տեղի ունեցած է 10 Սեպտեմբեր, 2006ին, Պէյրութի մէջ, կակծալի արկածի մը հետեւանքով:

Այս տխուր առիթով մեր խորագոյց ցաւակցութիւնները կը յայտնենք հանգուցեալի ծնողաց՝ Տէր եւ Տիկ. Փարամազ եւ Մարօ Քիպարեանին, ընտանեկան բոլոր պարագաներուն, մասնաւորաբար մօրեղբօր Տէր եւ Տիկ. Թովմաս էթարեանին:

«Մասիս»

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

ՈՎՍԱՆԱ ԱՆՊԱՐԵԱՆԻ մահուան առթիւ, մեր խորին շնորհակալութիւնը կը յայտնենք բոլոր անոնց որոնք մասնակից եղան իրենց ներկայութեամբ, ծաղկեպսակով, նուիրատուութեամբ, այցելութեամբ, հեռաձայներով եւ ցաւակցական զիրերով սպասելի մեր մօրը մահը:

Յատկապէս մեր շնորհակալութեան խօսքը կ'ուղղենք «Մասիս» եւ «Նոր Կեանք» շաբաթաթերթերուն եւ Նոր Սերունդ Մշակութային Միութեան իրենց բերած բարոյական վերաբերմունքին համար:

Ժամէք Գէորգեան, Գաբրիէլ Ալպարեան, Հեմմինէ Զալեան եւ Շաբէ Սահակեան

ՏԵՐ ԸՇԲԻԳԸԼԻ (SPIEGEL) ԸԱՐՅԱԶՐՈՅՑԸ ԱՍԱԴԻ ՆԵԺԱԴԻ ՇԵՏ

Շարունակուած էջ 14-էն

դիսացան: Մենք Սատտամի դէմ էինք եւ նրա պատճառով շատ վնասներ ունեցանք: Մենք շատ ուրախ ենք որ այն գահընկեց եղաւ, բայց չենք ընդունի որ ամբողջ երկիրը նրա ոչնչացման պատճառով կուլ գնայ: Այս բռնագրաւուած վիճակում հարիւր հազար իրաքցի սպանուեց, բարեբախտաբար գերմանացիները համագործակցութիւն չցուցաբերեցին: Մենք իրաքի ապահովութիւնն ենք ուզում:

- Բայց Պրն. Նախագահ ո՞վ է իրաքը կլանում: Ամերիկան գործնականապէս պարտուել է եթէ իրանը դրական համագործակցութիւն ցուցաբերի, հաւանական է օգտակար հանդիսանայ Ամերիկային, որ նահանջի մասին մտածել կարողանայ:

- Շատ հետաքրքիր է: Ամերիկան երկիրը գրաւում է, մարդկանց սպանում է, քարիւղը ծախում է, իսկ երբ պարտուում է մեղքը գցում է ուրիշների վրայ: Իրաքի ժողովուրդը շատ սերտ կապեր ունի մեզ հետ: Մասնաւոր երկու կողմերում մարդիկ իրար հետ ազգակից են: Մենք հազարաւոր տարիներ իրար հետ ենք ապրել: Մեր սրբատեղիները իրաքի հողումն են, իրաքն էլ ճիշդ իրանի պէս քաղաքակրթութեան կեդրոն է եղել:

- Արդի՞ւնքը: - Մենք միշտ ասել ենք, մենք պաշտպանում ենք այն պետութիւնը որը իրաքի ժողովուրդն է ընտրում: Իմ կարծիքով Ամերիկան վատ վարքագիծ է ցուցաբերում: Ամերիկացիները անգամներ մեզ պատգամ են ուղարկել եւ մեզանից խնդրել են որ մենք օգնենք եւ նրանց հետ համագործակցենք, նրանք ասել են որ պէտք է իրաքի հետ բանակցութիւն ունենանք: Այդուհանդերձ որ մեր ժողովուրդը Ամերիկային վատահոլութիւն չունի բայց մենք ընդունեցինք եւ յայտնեցինք բայց Ամերիկան ժխտական դիրք ընդունելով մեզ անպատուեց (անարգեց): Հիմա էլ մենք աշխատում ենք իրաքում ապահովութիւն ստեղծել, բայց բանակցութեան պայմանը նրանումն է որ Ամերիկան փոխի իր վարքագիծը:

- Արդե՞օք Ամերիկային եւ մնացած աշխարհին գրգռելով դուք գուարձանում եք:

- Ոչ, ես ոչ ոքու չեմ անպատուում. նամակը որ գրել եմ Պրն. Պուշին քաղաքավարի էր: - Ձեր միտքը անպատուել չէ, հրահրել է:

- Ոչ, մենք ոչ մի թշնամութիւն ոչ ոքու հետ չունենք: Մենք Ամերիկացի զինուորների համար երկմիտ ենք, որ իրաքում սպանուում են: Ինչո՞ւ պէտք է նրանք իրենց կեանքը այնտեղ զոհեն: Կոխը անիմաստ է: Պատերազմ, ինչո՞ւ երբ միաժամանակ գոյութիւն ունի մարդկային բանակներ:

- Արդե՞օք ձեր մտածածը Ամերիկայի նախագահին միեւնոյն ժամանակ քայլ է դէպի ուղղակի բանակցութեան:

- Մենք մեր դիրքորոշումը պարզօրէն ասել ենք եւ նոյնպէս տեսնում ենք աշխարհի բարդութիւնները: Քաղաքական միջոցառում որոշ հօրը ուժերի միջոցով խիստ պղտորուած է, որովհետեւ նրանց տեսակէտով սուսն ու զրպարտութիւնը օրինական են: Մեր կարծիքով դա շատ վատ է: Մեզ համար բոլոր մարդիկ յարգելի են: Յարաբերութիւններն ու հաղորդակցութիւնները պէտք է արդարութեան

վրայ յենուած լինեն, եթէ արդարութիւն կայ, խաղաղութիւն էլ կայ, անարդար յարաբերութիւնը շարատեւ չէ մինչեւ իսկ եթէ Ամհադի-Նեժադը նրան հակառակ չիօսի:

- Ամերիկայի նախագահին ուղղած ձեր նամակում մի բաժին յատկացուած է 11 Սեպտեմբեր 2001ի մասին: «Ինչպէ՞ս կարելի է նման գործողութիւն, առանց Ապահովութեան եւ Տեղեկատուութեան կազմակերպութիւնների համագործակցութեամբ եւ առանց թափանցելու նման հզօր կառոյցների մէջ, կատարուի»: Դուք միշտ զրպարտում եք: Այս խօսքը ի՞նչ է նշանակում: Արդե՞օք »Սրա«ն օգնեց որ Մոհամադ Աբամ եւ 18 ուրիշ տերորիստներ կարողանան այս գործը կատարել:

- Ոչ, այդ չէի ասում: Մեր կարծիքով նրանք պէտք է ասէին ո՞վ է մեղաւոր, չպէտք է Սեպտեմբեր 11ի պատրուակով Միջին Արեւելքում զինուորական յարձակում կատարէին: Նրանք պէտք է մեղաւորներին դատարան տանեն: Մենք սրա հետ հակառակ չենք: Մենք մեղաւորեցինք այն դէպքերը: Ամէն մի արարք անմեղ մարդկանց դէմ, մեզ համար դատապարտելի է:

- Դուք այդ նամակում այսպէս էք գրել թէ արեւմտեան լիբերալիզմը պարտուել է: Իսկապէս ինչպէ՞ս էք այս եզրակացութեան հասել:

- Տեսէք դուք Պաղեստինի թնձուկի համար հազար տեսակ բացատրութիւն ունէք: Դեմոկրատիայի համար էլ դուք ամէն դիպուածով, տարբեր բացատրութիւն ունէք: Երբ մի երեւոյթ բացմաթիւ մարդկանց տեսակէտներին է առնչուում եւ մարդիկ կարող են իրենց ցանկութեամբ բացատրութիւն տալ, էլ չի կարող արդէն իմաստ ունենալ: Այս ձեւով հնարաւոր չէ աշխարհի թնձուկները լուծել: Մի նոր ելքի կարիք կայ: Ի հարկէ մենք համոզուած ենք որ մարդկանց ազատ որոշումը պէտք է իշխող լինի: Բայց հաստատ համոզմունքների եւ յստակ սկզբունքների կարիքն է զգացում: Սկզբունքներ՝ որ բոլորի համար ընդունելի լինի: Օրինակ՝ արդարութիւն: Իրանն ու Արեւմուտքը այդ բանի հետ համաձայն են:

- Հիմա իրանի եւ Արեւմուտքի մէջ անհամաձայնութիւն կայ, ի՞նչ ընթացք էք ունենալու:

- Մենք ամերիկեան տրամաբանութիւնը հակառակում ենք: Նրանք իսլամական լեղափոխութեամբ շատ վնասուեցին: Բայց մենք սրանից ենք զարմանում որ որոշ եւրոպական երկրներ դէմ են մեզ: Ատոմական հարցի շուրջ ես մի պատգամ ուղարկեցի այս հարցումով՝ Եւրոպացիները ինչո՞ւ են Ամերիկայի թարգմանը հանդիսանում մեզ համար: Չէ որ, նրանք գիտեն մեր ատոմական գործողութիւնները խաղաղութեան նպատակով է նախատեսուած: Եթէ Եւրոպացիները իրանին կողմնակից լինեն, նրանց եւ մեր օգտին է: Բայց եթէ մեզ դէմ լինեն միայն իրենք կը վնասուեն, որովհետեւ մեր ժողովուրդը հաստատակամ եւ ուժեղ է: Եւրոպացիները իրենց հեղինակութիւնը Միջին Արեւելքում բոլորովին կորցրել են եւ մնացած աշխարհում համարում եւս իրենց հուշակն էլ կը կորցնեն: Մարդ մտածում է նրանք ի վիճակի չեն դժուարութիւններ լուծելու:

- Պրն. Նախագահ այս հարցազրոյցի համար ձեզանից շնորհակալ եմք:

(Վերջ)

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ
ԿԱՅԾ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ
ՀԱՅ ՄԱՐՄՆԱՄԱՐԶԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

NOR SEROUNT CULTURAL ASSOCATION
GAIDZ YOUTH ORGANIZATION
& ARMENIAN ATHLETIC ASSOCIATION

ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ – FREE ADMISSION

Festival

Armenian Independence Day

Sunday September 24, 2006

10AM - 7PM

Verdugo Park, Glendale

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՅ

ՓԱՌԱՏՕՆ – 2006

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՃՈՒԽ ՅԱՅՏԱԳԻՐ



ԵՐԳ
ՊԱՐ
ԱՐՈՒԵՍՏԻ
ՑՈՒՑԱԴՐՈՒԹԻՒՆ
ԳԻՐՔԵՐՈՒ ՎԱՃԱՌՔ
ՓՈՔՐԵՐՈՒ ԽԱՂԵՐ
ՆԱՐՏԻԻ ՄՐՑԱՇԱՐՔ
ՀԱՄԱԴԱՄ ՃԱՇԵՐ